29.8.96
8-9 V

Աղբիւրի յաւելուած

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 31 կիրակի 9 օգոստոսի | ինեերորդ տարի 1898

Էսիլդ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Ժողովրդի թէ ներկայ և թէ ապագայ կեանքը կախուած է նրա առողջական դրութիւնից։ Եթէ ժողովուրդը ֆիզիկապէս առողջ չէ, մեծ յոյսեր չէ կարելի դնել նրա մտաւոր ու բարոյական առաջադիմութեան վրայ։ Տկար ժողովուրդը, եթէ մինչև անգամ շրջապատուած լինի ամենասրտակից բարեկամներով, օրից օր կլփոքրանայ, կրթուլանայ և վերջ ի վերջոյ կանհետանայ երկրի վրայից։ Որովհետև երբ մի՛ առարկայ ի ներքուստ փտում է, երբ մի երևոյթ ինքնիրան լուծւում է, ինչ կարող են անել նրա համար շրջապատող առարկաները, երևոյթները։ Բայց որքան առաւել վտանգաւոր է այն ժողովրդի կեանքը, որին թշնամին դրսից է փոքրացնում, իսկ ինքը ներսից։ Իսկ մի առողջ, ամբակազմ ժողովուրդ շատ անգամ դիմանում է պատմական փոթորիկներին և չընայելով իր կրած մեծամեծ զրկանքներին, կրկին լոյս աշխարհ է գալիս աւելի մեծ եռանդով։ Եթէ ծառը առողջ է, եթէ նրա ջղերի մէջ չէ ցամաքել դեռ աստուածային թարմ հիւթը, ապա նա կրկին ու կրկին ծաղկում է, եթէ նոյն իսկ նրա բոլոր ճիւղերը կտրտէին։ Փորձառու պարտիզպանները գիտեն, որ ճիւղերի կտրտելուց յետոյ առողջ ծառը աւելի էլ լաւ է բսնում, կարծես նորից ջահելանում է։

Եթէ այդքան կարևոր է առողջական դրութիւնը ժողովրդի կեանքի համար, ուրեմն մամուլը և գրականութիւնը պիտի առաջնակարգ նիւթ համարեն նրան և շարունակ զբաղուեն նրանով։ Մի ժամանակ այդ գիտակցութիւնը զարթնել էր մեր հասարակութեան մէջ, պահանջը պարզ էր ամենքի համար։ Մինչև իսկ մասնաւոր ամսագիր հիմնուեց՝ «Առողջապահական Թերթ» անունով։ Բայց մեր հասարակութիւնը չըկարողացաւ պահել այդ խիստ կարևոր հիմնարկութիւնը։ Մեր ժողովրդի սուրութիւնն է՝ անտարբեր լինել դէպի իր գործող ոյժերը, անուշադիր թողնել նրանց, և որպէս հետևանք այդ անուշադրութեան, զրկուել նրանցից և յետոյ... կոկորդիլոսի արտասուք թափել, թէ ինքը զուրկ է...

Ներկայումս կրկին սկսում է զարթնել մեր մամուլը։ Մէկ-մէկ երևում են լուրջ յօդուածներ, որոնք ձգտում են դիտակցութիւն զարթնեցնել մեր ժողովրդի մէջ դէպի իր առողջական դրութիւնը։ Ցանկալի է որ այդ փորձերը թւով շատանային և որակութեամբ զօրեղանային։ «Տարազ» շաբաթաթերթը, որպէս հայ ընտանիքի օրգանը, աւելի էլ մեծ պարտաւորութիւն ունի այդ ուղղութեամբ նիւթեր տալու։ Ուստի աւելորդ չենք համարում մի ամփոփ բացատրութիւն տալ մեր աշխատակիցներին ու ընթերցողներին, թէ իսկապէս ինչումն է կայանում առողջապահութեան հարցը։

Արդիկ տկարանում են, հիւանդանում են զանազան պատճառներից. եղանակի վատ ազդեցութիւնից, մթնոլորտի մէջ կեանք ունեցող բազմատեսակ թունաւոր բացիլներից, ֆիզիկական ոյժերի անկանոն գործադրութիւնից և այլն։ Տկար կամ հիւանդ մարդը նորից ձգտում է վերականգնել իր դրութիւնը և ոյժերը։ Ինքը բնութիւնը օգնում է մարմնին իր առողջութիւնը վերականգնելու։ Մարմինն ունի դիմադրութեան ոյժ, թարմացնող բնաւորութիւն, այնպէս որ նա ինքն իրան՝ առողջացնում է, ինքն իրան բժշկում է, որպէս ծովը թարմացնում է ինքն իրան, ափը նետելով բոլոր փտածութիւնները, դիակները... Զատ և շատ հիւանդութիւններ անցնում են առանց որևէ բժշկական օգնութեան և շատ լաւ են անցնում։ Այստեղ աւելորդ չենք համարում պատմել ընթերցողին մի վերին աստիճանի ուշադրութեան արժանի նորութիւն։ Ամենքը ծանօթ են տենդ կոչւած հիւանդութեան (ջերմուտենք), որ առաջանում է ինչոր ճահճային թոյնից, որ մտնելով արեան մէջ, մի տեսակ մրսեցնող ազդեցութիւն է անում մարմնի վրայ։ Մինչև այժմ այդ հիւանդութեան դէմ բժիշկները ուրիշ բան չըգիտէին, բայց թէ խինին խմացնել հիւանդին. խինինի ազդեցութիւնից իսկապէս տենդը անյայտնում էր, միայն թէ ժամանակաւոր։ Հէնց որ խինինի ազդեցութիւնը թուլանում է, հիւանդութիւնը կրկին նորոգւում է, եթէ նա չէ անցել նպաստաւոր ազդեցութիւններից (պարզ օդից, լաւ սննդից)... Այժմ պրոֆեսոր Կոխ այն գիւտն է արել, որ խինինով բժշկւած հիւանդները միշտ պահում են կրկին հիւանդանալու տրամադրութիւնը, իսկ այն հիւանդները, որոնք ոչինչ դեղ չեն ընդունում, այլ թողնում են «Աստուծոյ կամքին», բժշկւում են վերջնական կերպով, այսինքն նրանց մարմինը առ միշտ ապահովւած է լինում տենդով հիւանդանալու վտանգից։ Այժմ Թիֆլիսի բժիշկներից մէկը, դոկտոր Բոստովիչ, Кавказъ լրագրի մէջ ապացուցանում է, որ յիշեալ գիւտը ոչ թէ պրոֆեսոր Կոխին, այլ իրան է պատկանում, քանի որ ինքը տասնեակ տարիներ սուաջ նկատել է այդ երևոյթը և զեկուցում է տուել կառավարու-

թեան։ Իսկ մենք պնդում ենք, որ այդ գիւտը ոչ Կոխին է պատկանում և ոչ Պոստովիչին, այլ մեր հին պառաւները միշտ բողոքել են և բողոքում են խիստ դործածութեան դէմ, ասելով թէ տենդը ինքն իրան կանցնի։ Ցաւալի է, ճշմարիտ... Տասնեակ տարիների ընթացքում թունաւորել մարդկանց արիւնը, քայքայել նրանց նեարդերը դանադան դեղատոմսերով, ողորմելի արհեստաւորի կոպէկները լցնել դեղագործների փորը, ապա «գիւտ անել», թէ հիւանդութիւնը ինքն իրան աւելի լաւ կանցնէր...

Բայց խնդրից չըհեռանանք։ Շընայելով անխուսափելի սխալներին, մենք ընդունում ենք բժշկականութեան նշանակութիւնը։ Բժշկականութիւնը անպայման օգտակար դրական գիտութիւն է, որ մանաւանդ ապագայում մեծ նշանակութիւն պիտի ունենայ։ Բայց և այնպէս հարկաւոր ենք համարում շեշտել, որ բժշկական գիտութիւնից (մեդիցին) շատ աւելի կարևոր է առողջապահական գիտութիւնը (հիգիէն)։ Բժշկականութիւնը սովորացնում է, թէ ինչպէս բժշկել արդէն հիւանդացած մարդին, իսկ առողջապահութիւնը ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է կեանք վարել, որպէս զի չըհիւանդանալ։ Ի հարկէ ամեն մարդ հասկանում է, որ աւելի լաւ է չըհիւանդանալ, քան թէ հիւանդանալ ու բժշկուել։ Ուստի և աւելի մեծ նշանակութիւն ունի առողջապահութիւնը, որի մասին մի քանի ամփոփ նկատողութիւններ կանենք հետևեալ անգամ։

ՆԱԴՍԸՆԻՑ

Ո՞Հ, եթէ այնտեղ՝ դերեզմանից դէն,
Կայ մի աշխարհ գեղ և երանաւէտ,
Ուր քնած է չարիքը նախանձաղէմ,
Ուր հանգստութիւնը տիրում է յաւէտ,
Ուր խելքը՝ չի յուզում կասկածանք,
Ուր կուրծքը չի մաշում կռիւը յամառ,
Ո՛վ Արարիչ, լըսիր իմ աղերսանք...
Եւ իմ թշուառիս հոգին ա՛ռ։

Ի՞նչ զրզուելի է այս փուչ աշխարհը
Իրա շինծու փայլող կեղծիքով,
Այստեղ եղբօրը՝ հարազատ եղբայրը
Պատրաստ է սպանել իր ձեռքերով։
Այստեղ մեռած է վեհ բռնկումն
Սիրոյ, ճշմարտի և ազատութեան,
Այստեղ փողի աստուածն անկշտում
Բարձրացրել է իրա սեղան։

Այլ ձգտումներով է լի իմ հոգին.
Նա սիրոյ, խաղաղութեան կարօտն է քաշում.
Բայց կռիւը և կասկածի թոյնը դառնագին
Նրան անխնայ հալում են, մաշում։
Նա լոզուր է, լոզուր աղերսում լոյս,
Դառն, այրող ու համր վըշտով,
Կէս գիշերը անարշալոյս,
Տիրում է երկրին իր բոլոր ուժով։

Մարդկային սղգի ողորմելի որդին
Արեան ու խաւարի մէջ խեղդուելով,
Կորուս՛ալ արքայութեան դռնին
Նայում է ծաղրով ու պարսաւելով։
Եւ նրանց՝ որոնց սրբազան ձրգտումը
Կանչում է դէպի վեհ դեղեցկութիւն,
Ճակտին դնում է արտաքսման դրոշմը
Եւ բարձրացնում անարդական սիւն։

Արսէն Դուկասեանց

ԼՈՒԿՐԷՑԻԱ ԲՈՐՋԻԱ*)

Ողբերգութիւն երեք արարածով

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՕ'Ի

արարուած երկրորդ

Զ Ո Ց Դ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Դահլիճ Ֆէրրարայի դքսական պալատում։ Պատերը պատուռած ոսկեզոյն շրջանակներով։ XV դարու գեղեցիկ կահ կարասիք իտալական ճաշակով։ Դքսական բազկաթոռը պատած է կարմիր թաւիշով, վրան Էստէի տոհմադրոշմը կարուած։ Մի կողքին սեղան, ոսկեզօծ կարմիր թաւիշով։ Բեմի խորքում մի մեծ դուռը։ Աջ կողմը մի փոքր դուռ։ Ձախ կողմը մի ուրիշ փոքր դուռ, միայն վարագուրած։ Վարագուրած դռան ետևից երևում է դէպի առաստաղը տանող մի ոլորաձոյ սանդուղք, լուսաւորուած երկար ու նեղ վանդակապատ լուսամուտով։

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Ալֆոնս դ'Էստ, շէջ հագնուած։ Ռուսիգելլո, հագնուած է մթնոլորտի գոյներով, բայց աւելի համեստ։

Ռուսիգելլո։ Ձերդ մեծութիւն, հրամաններդ կատարուած են։ Էլ ինչ ունէք հրամայելու։

Ալֆոնս։ Վերցրու այս բանալին և դնա Նումայի սրահը։ Այնտեղ համարիր պատկերների բոլոր քանդակագործ շրջանակները, սկսած իմ նախահայրերից մէկի՝ Իպպիտէրի որդի Հերքուլէսից։ Պոտե-

*) Տես Տարազ № 30.



Դաղանները

նալով քսան և երեքերորդ շրջանակին՝ դու կընկատես մի փոքր անցք ոսկէզօծ առիւծի բերանում թաղնուած։ Դիր այս բանալին այն անցքի մէջ, շրջանակը կրբացվի դռան նման։ Այդ բացուած դաղտնի պահարանի մէջ դու կըտեսնես ապակեայ ափսէի վրայ դրած երկու աման՝ մէկը արծաթեայ, իսկ միւսը ոսկէ։ Արծաթեայ ամանի մէջ մաքուր ջուր է, իսկ ոսկեայ ամանինը պատրաստուած գինի։ Զգուշութեամբ կրտանես այն ափսէն Հարեան առանձնասենեակը և եթէ դու լսել ես Բորջիայի հռչակաւոր թոյնի մասին, որ փոշի եղած ժամանակ սպիտակ է և փայլուն ինչպէս Կարրարեան մարմարիոնի թոզը, իսկ խառնուած լինելով, Բոմորանտէնի գինին դարձնում է Սիրակուզեան, ի հարկէ դու չես մոռանալ ոսկեայ ամանին։

Ռուսիգէլլո։ Լսում եմ, ձերդ մեծութիւն։

Ալֆոնս։ Յետոյ դու վերցրու քո ամուր սրերից մէկը և կանգնիր առանձնասենեակում այնպէս, որ դու կարողանաս լսել այն բոլորը, ինչ որ այստեղ կրպատահի և ներս մտիր առաջին իսկ նշան տուած ժամանակս, որ ես կրյայտնեմ այս զանգակով։ Եթէ ես կանչեմ միայն «*Ռուսիգէլլո*», դու ներս կրմտնես ափսէով, իսկ եթէ զանգահարեմ, ներս կրմտնես սուրը ձեռքիդ...

Ռուսիգէլլո։ Հասկանում եմ, ձերդ մեծութիւն։

Ալֆոնս։ Զրմռանաս, որ մերկացած սրով լինես։

Ռուսիգէլլո։ Բոլորը իսկութեամբ կրկատարեմ։

Ալֆոնս։ Վերցրու յամենայն դէպս երկու սուր։ Մէկը կարող է կոտրուել... Գնա։ (Ռուսիգէլլոն դուրս է գնում դռնից)։

Ծաուայ (ներս մտնելով միջին դռնից)։ Նորին մեծութիւն դքսուհին ցանկանում է խօսել ձերդ գերազանցութեան հետ։

Ալֆոնս։ Խնդրիր։

—

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Ալֆոնս և Լուկրեցիա։

Լուկրեցիա (ներս մտնելով քաջալացած)։ Պղծութիւն է, անազնուութիւն է, վերջապէս լրբութիւն է սա։ Գիտէք, Ալֆոնս, որ ձեր հպատակներից մէկը համարձակուել է պալատի ճակատին կախուած իմ տոհմագրոշմի առաջին տառը պոկել։ Այդ յանդգնութիւնը կատարուել է օրը ցերեկով. հրապարակաւ և դեռ ևս չգիտեմ, թէ ով է նա, որ համարձակուել է ինձ վիրաւորել... ինձ վրայ այժմ ծիծաղում է Ֆէրրարայի ամբողջ բնակչութիւնը։ Ամբողջ Իտալիայի այդ ցածհոգի ժողովուրդը, խռնելով պալատի առաջ հեգնութեամբ ծիծաղում է։ Դուք ի հարկէ հասկանում էք, Ալֆոնս, որ այդ տեսակ վիրաւորանքները ինձ զարձութիւն չեն կարող պատճառել և որ ես կրհամաձայնէի աւելի շուտ մէկ անգամ մեռնել սրի հարուածից, քան թէ տանել հազար կծու ծաղը և դանդաղ չիմար հանաքներ։ Ներեցէք ինձ, բայց ես համարձակ կ'ասեմ ձեզ, որ ինձ հետ շատ օտարոտի և վատ են վարուում ձեր կալուածքներում։ Վերջապէս ինձ այս բանը ձանձրացնում է, ես էլ չեմ կարող տանել այս խայտառակութիւնը, այն ինչ դուք, իմանալով այս բոլորը, անտարբեր էք մնում և երբէք չէք փոխում ձեր հանգիստ դիրքը մինչև անգամ այն ժամանակ էլ, երբ ամբողջ քաղաքը ծաղրում է ձեր կնոջը։ Ես պահանջում եմ ձեզանից լիակատար բաւականութիւն, լսում էք։ Պատրաստուեցէք դատաւոր լինելու այս գործում։ Այստեղ խօ մի հասարակ պատահականութիւն չէ։ Կարելի է դուք կարծում էք, որ ես ոչ մէկի յարգանքին արժանի չեմ և իմ ամուսինը կարիք էլ չունի ինձ պաշտպանելու։ Ընդհակառակը, ձերդ մեծութիւն։ Ով ամուսնանում է, նա հովանաւորում է և ես էլ յոյս դրա վրայ ունիմ։ Այստեղ ինձ ամենայն օր նոր-նոր վիրաւորանքներ են հասցնում, այն ինչ ես երբէք չեմ նկատել, որ դուք դրանից նեղանաք։ Մի՞թէ այն ցեխը, որ ինձ վրայ են արձակում, չէ կեղտոտում և ձեզ... Ի սէր Աստուծոյ, բարկացէք գոնէ մէկ անգամ ձեր կեանքում ինձ պաշտպանելու համար։ Դուք ինձ յաճախ ասում էք, որ սիրահարուած էք ինձ վրայ։ Եղէք գոնէ իմ պատուոյ պաշտպանը։ Դուք յաճախ ինձ էք նախանձում։ Նախանձուեցէք գոնէ իմ անուանս համար էլ։ Եթէ ես իմ բերած օժիտով կրկնապատկել եմ ձեր ժառանգական կալուածքները, եթէ ես իմ ամուսնութեամբ բերել եմ ձեզ ոչ միայն ոսկէ վարդ և նորին սրբութեան պապի օրհնութիւնը, այլ աւելի էական բաներ, ինչպէս օրինակ Սիէնա, Բիմինի, Սէչէնա, Սպոլէտտո և Պիոմբինօ, որոնց քաղաքների թիւը աւելի շատ է, քան թէ ձեր պալատները և դքսական կալուածները աւելի են քան թէ բարոնութիւնները։ Եթէ դուք իմ շնորհիւ դարձել էք Իտալիայի ամենահզօր թագաւորը, այդ բոլորը դեռ չէ տալիս մեզ իրաւունք թոյլ տալու ժողովրդին ծիծաղել վրաս և վիրաւորել ինձ, թոյլ տալ ամբողջ Ֆէրրարային մատնացոյց անելու ձեր կնոջ վրայ, որին արհամարհում են ամենքը և աւելի ցած պասում ձեր ձիապանների աղջիկներից անգամ... Ես պահանջում եմ, որպէս զի այսօրուայ յանցանքը բացուէր և խիստ պատժի ենթարկուէր մեղաւորը, հակառակ դէպքում ես կրբողոքեմ նորին սրբութեանը,

[illegible]ը[illegible]ողոքեմ Վալէնտինի դքսին, որ այժմ գտնուում է [illegible]ոլէում տասն և հինգ հազար զօրքով։ Մտածեցէք, արժէ՞ արդեօք այժմ նեղութիւն կրել բազկաթոռից վեր կենալու թէ ոչ։

Ալֆոնս։ Ձերդ մեծութիւն, այն յանցանքը, որի մասին դուք ինձ այժմ պատմեցիք, ինձ յայտնի է։

Լուկրէցիա։ Ինչպէ՞ս։ Յանցանքը յայտնի է, իսկ յանցաւորը դեռ չէ՞ բռնուած։

Ալֆոնս։ Յանցաւորը բռնուած է։

Լուկրէցիա։ Փառք Աստուծոյ։ Եթէ նա բռնուած է, ինչու մինչև այժմ չէ բանտարկուած։

Ալֆոնս։ Նա բանտարկուած է։

Լուկրէցիա։ Բայց երևի դեռ չէ պատժուած։

Ալֆոնս։ Ժամանակ շատ կայ։ Ես նախապէս ուզում էի ձեզ հետ խորհրդակցել պատժի մասին։

Լուկրէցիա։ Շատ գեղեցիկ։ Իսկ ո՞ւր է նա։

Ալֆոնս։ Այստեղ է։

Լուկրէցիա։ Ա՜, այստեղ է։ Լա՜։ Պէտք է որինակ ցոյց տալ, ձերդ մեծութիւն։ Այստեղ նորին մեծութեան վիրաւորանք է։ Այս տեսակ յանցագործները գլխատւում են և ձեռքերն էլ կտրւում... Ա՜, արեմն նա այստեղ է։ Ես ուզում եմ նրան տեսնե՛լ...

Ալֆոնս։ Դա շատ հեշտ է. (կանչում է) Բաբիստա, (ներս է մտնում Ն-իրոքը)։

Լուկրէցիա։ Բայց նախ քան ձերբակալուածին ներս բերելը, թոյլ տուէք ինձ դարձեալ մի խօսք ասել։ Ով որ կուզէ լինէր ինձ վիրաւորողը, այստեղացի կամ ձեր բարեկամ, տուէք ինձ, Ալֆոնս, թագաւորական խօսք, որ նա այստեղից կենդանի չի դուրս գնալ։

Ալֆոնս։ Խօսք եմ տալիս... Ազնիւ խօսք եմ տալիս ձեզ, Լուկրէցիա։

Լուկրէցիա։ Զնորհակալ եմ։ Այժմ թող ներս բերեն, ես ինքս հարցու փորձ կ'անեմ նրան... Ստուած իմ, արդեօք ինչ վատութիւն եմ արել ես մարդկանց։ Ի՞նչու ինձ այսպէս անխնայ հալածում են։

Ալֆոնս (Ն-իրոքին)։ Բե՛ր յանցաւորին այստեղ։

(Դռ-ռը բաց-ում է։ Ներս է մտնում Ջէննարօն, ձեռքն գլխ-ոտներով ո-ղեկցո-ւեալ։ Այդ իսկ րոպէին երևում է Բ-ոտիգելլան, որ գնում է ոտնատ-ակով, գլխի, գլխակա-ր-ած գա-ռան էակ։ Նա գտնում է ոտքն, որի վրայ դր-ած են երկո- ամոն, մեկը ոսկեայ, իսկ մի-ը արծաթեայ և երկո- քաշք։ Նա ոտքն գնում է լ-ամոտի վրայ, մերկացնում է ոտ-ը և կանգնում է դ-ռան էակ)։

—

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Նրանք և Ջէննարօ

Լուկրէցիա (մի կողմը)։ Ջէննարօ։

Ալֆոնս (մոտենալով նրան ծպկոը երեսին)։ Մի՞թէ դուք սրան ճանաչում էք։

Լուկրէցիա (մի կողմը)։ Սա Ջէննարօն է։ Որպիսի սարսափելի դիպուած։ (Լ-ուրջերից վշտացած նայում է նրա վրայ։ Ջէննարօն գլխը գորգնում է)։

Ջէննարօ։ Ձերդ մեծութիւն, ես իրրև մի համեստ սպայ, թոյլ եմ տալիս ինձ դառնալ դէպի ձեզ մի այս տեսակ հարցով։ Այս առաւօտ դուք հրամայել էիք բռնել տալ ինձ հէնց նոյն իսկ իմ բնակարանում։ Ի՞նչ գործ ունի ձերդ մեծութիւնն ինձ հետ։

Ալֆոնս։ Պարոն կապիտան, այս առաւօտ այն տան առաջ, ուր դուք բնակւում էք, պատահել է մի աչքի ընկնող անցք։ Իմ սիրելի ամուսին դոնա Լուկրէցիա Բորջիայի անունը լրբաբար այլանդակուած է մեր դքսական պալատի առաջ։ Մենք որոնում ենք մեղաւորին։

Լուկրէցիա։ Սա նա չէ։ Սխալ է, Ալֆոնս։ Բոլորովին այս երիտասարդը չէ։

Ալֆոնս։ Ո՞րտեղից գիտէք դուք։

Լուկրէցիա։ Ես հաւատացած եմ։ Այս սպան վենետիկեցի է, ոչ թէ ձեր հպատակ։

Ալֆոնս։ Ի՞նչ անենք։

Լուկրէցիա։ Անցքը պատահել է այս առաւօտ, իսկ ես գիտեմ, որ ամբողջ առաւօտը նա անցրել է իր ժամանակը օրիորդ Ֆիամէտտայի մօտ։

Ջէննարօ։ Սխալ է։

Ալֆոնս։ Ձերդ մեծութեանը բոլորովին սխալ տեղեկութիւններ են հաղորդել, թոյլ տուէք սրան ես հարց ու փորձ անեմ... Կապիտան Ջէննարօ, արդեօք դո՞ւք էք այն յանցագործը։

Լուկրէցիա։ Ո՜հ, որքան ծանր է այստեղ օդը... ինձ օդ է հարկաւոր, օդ... (մոտենում է լ-ուսամուտին և անցնելով Ջէննարօի մոտից, ասում է նրան ցած յոյնով, բայց շ-ա)։ Ասա՛, որ դու չես։

Ալֆոնս (մի կողմը)։ Սա նրան ինչ որ ասաց։

Ջէննարօ։ Ձերդ մեծութիւն, Կալաբրիայի ձրկնորսները, որոնք ինձ դաստիարակել են և փոքր ժամանակ լողացրել ծովի մէջ կազմուածքս աւելի կազդուրելու համար, ինձ մի այսպիսի կանոն են տուել, որ կատարելով, յաճախ կեանքով պատասխանատու կարող ես լինել, բայց միշտ պատիւդ կըպահես։ Նրանք ասում էին. «Վարուիր այնպէս, ինչպէս ասում ես, ասա՛ այն, ինչ որ անում ես»։ Ձերդ մե-

Աղբիւրի մօտ



Նաւաբեկութիւն հեռաւոր արեւելքում

ծութիւն, ես հէնց նա եմ, որին դուք սրոնում էք:

Ալճոնս (դառնալով Լուկրէցիային): Ես կրկատարեմ տուած խօսքս:

Լուկրէցիա: Ես ձեզ մի առանձին խօսք ունիմ ասելու:

(Դուռը նշան է տալիս, որպէս զի ներքին և դիմերը յանդարդի հեռանան):

(Կրշարունակուի)

* * *

Տանջվի՛ր, իմ սիրտ. կեանքն է կռիւ—
Ինչո՞ւ այդպէս թուլացար!...
Մի՞թէ միշտ քեզ երջանկութիւն
Մեր աշխարհը պիտ ժպտարի...
Թէեւ չըկայ ոգեւորիչ
Ազնիւ սիրով մի ընկեր,
Թէեւ բախտի անգութ հարւած
Խեղդեց քո մէջ սուրբ ըղձեր.
Միշտ տանջելով մխիթարիր
Ի զուր է քո հառաչանք—
Խաղաղ ժամեր մի՛ փափագիր,
Անվախ սիրիր դու տանջանք...

Բար—Թէոս

«ՋՐԱՍՈՅՑ ԶԱՆԳԸ»

Դրամա—զոյց 5 գործ.

Հեղինակութիւն Հերբարտ Հաուպտմանի

(Gerbart Hauptmann, Die versunkene Qlocke. Ein deutsches Märchendrama)

Զատ քիչ է պատահում, որ մենք գտնենք ճշմարտութիւնը առանց ծայրայեղութիւնների մէջ ընկնելու: Նախ քան հանգստացնող գիտակցութեան գողտրիկ նպատակին հասնելը, պէտք է մինչև յատակը ճաշակել ամբողջ մոլորութիւնը: Շիլլեր

Այդպէս է կոչւում Հաուպտմանի վերջին դրաման, որ այնքան աղմուկ է հանել գերմանական մամուլի մէջ և որ այս տարի մեծ հետաքրքրութեան նիւթ դարձաւ նաև Պետերբուրգում:

Հերշարտ Հաուպտման թէև շատ ժամանակ չէ, որ յայտնուել է դրական ասպարէզում, բայց և այնպէս այժմ նա՝ եթէ ոչ առաջին, գոնէ առաջնակարգ տեղ է բռնում ներկայիս դրամատուրգների շարքում: Բեղմնաւոր դեղարուեստական տաղանդ, մանրակրկիտ հոգեբանական վերլուծութիւն, խորիմաստ ալլեգորիա, բազմակողմանի ծանօթութիւն կեանքի մասին, անգուգական շնորհք հասարակական կեանքի զանազան երևոյթները ճշգրիտ և վառ գոյներով պատկերացնելու – ահա անման յատկութիւնները, որ այդ երիտասարդ դրամատուրգին այսպիսի հռչակ են պարգևել: Զատ ու շատ անդամ նրան համեմատել են Գեոտէի հետ: Այդ համեմատութիւնը շատ արդարացի ու հիմնաւոր է մանաւանդ «Ջրասոյզ զանգի» վերաբերմամբ:

Այդ դրամայի սիւժէն է կազմում Հանիալին լեռների մասին գոյութիւն ունեցող գերմանական աւանդութիւնը, որ ասում է, թէ այնտեղ, ուր այժմ գտնում է լիճ, մի ժամանակ կար բնակութիւն, կար մի փոքրիկ գիւղ. բայց Աստուած պատժեց գիւղացիներին իրանց մեղքերի համար և մի գեղեցիկ օր հեղեղեց այդ գիւղը:

Պայծառ օրերին, շարունակում է աւանդութիւնը, կարելի է տեսնել, թէ ինչպէս ջուրը անդրադարձնում է այդ գիւղի տները, աշտարակները և զանգակատները և այդ ժամանակ մերթ ընդ մերթ լսւում է այդտեղից զանգակների զողանջիւն:

Հեղինակը այդ աւանդութիւնը ընդլայնել, փոխաբերել է հետևեալ ձևով.

Զանգակագործ Հենրիխը ուզում է շինել մի այնպիսի զանգ, որ չունենայ ոչ մի թերութիւն, որ հնչէ մաքուր և նուրբ ձայնով: Նա մտադիր է այդ զանգը բարձրացնել լեռների վրայ, որպէսզի նա դայլայլէ իր զողանջիւնը, տարածէ իր անուշիկ ձայնը ամեն կողմ և թափանցէ մարդկանց սրտերը, զարթեցնէ այնտեղ եղբայրական սէր:

Առաջին գործողութիւնը տեղի է ունենում անտառում, Վիտիխա անունով կախարդի իրճիթի մօտ: Այդ կողմում կայ մի ջրհոր, որ ջրային ոգու բնակավայրն է. կայմում. հեռւում պպզում է լիճը:

Անտառային ոգին պատմում է ջրային ոգուն, թէ ինչպէս Հենրիխի պատրաստած փառաւոր զանգը բարձրացնում էին դէպի լեռների գագաթը, թէ ինչպէս նա (անտառային ոգին) զարան էր մտել ճանապարհի ամենանեղ տեղում, թէ ինչպէս նա ցած գլորեց սայլը զանգով և թէ վերջապէս ինչպէս զանգը ահեղ գոռիւն-գոչիւնով սլանում էր դէպի անդունդը—լիճը:

Կարծես, իբրև ապացոյց այդ խօսքերի, բեմ է դուրս գալիս Հենրիխը՝ ուժասպառ եղած, վշտից ջախջախուած: Նա թուլանում—ընկնում է նստարանի վրայ և ուշաթափ է լինում: Նրան նկատում է Բաուտենդելէյն Քէոռն, որ առաջին անգամն է մարդ տեսնում:

Պաստորը, գիւղի ուսուցիչը և սափրիչը երկար որոնումներից յետոյ գտնում են Հենրիխին անշունչ դրութեան մէջ և պատգարակով տուն են տանում:

Երկրորդ գործողութիւնը տեղի է ունենում Հենրիխի տանը: Մագդան, իր ամուսնուն անշնչացած դրութեան մէջ տեսնելով, մոլորւում, յուսահատւում է: Բայց ահա Հենրիխը ջուր խնդրեց. նա սկսեց խօսել կնոջ հետ և յայտնեց, որ թէև իր զանգը կատարեալ էր և առանց մի որ և է թերութեան, թէև նրա ձայնը մաքուր էր և նուրբ, բայց այնուամենայնիւ այդ զանգը, ինչպէս այժմ ինքը զգում

է, պէտք կրդար Հովտի և ոչ լեռների համար... Նա կարծում է, որ ինքն անընդունակ է այդ գործի համար. և այդ պատճառով նա աւելի լաւ է համարում մեռնել: Այդ հակիրճ դրոյցից յետոյ նա նորից կորցնում է իր գիտակցութիւնը:

Պաստորը Մագդային խորհուրդ է տալիս հէքիմ հրաւիրել: Այդ ժամանակ ներս է մտնում Բաուտենդէլէյ Ֆէյան գեղջկուհու կերպարանքով: Նա կողովի միջից հանում է զանազան խոտեր, ձգում է ջրով լի կաթսայի մէջ, որ դրուած է ածուխի վրայ՝ օջախում և զանազան կախարդական ազօթքներ է կարդում. այդ բոլորի նպատակն է՝ Հենրիխին ուշքի բերելը: Անցնում է մի քանի վայրկեան. Հենրիխը բաց է անում աչքերը և զարմանում է իր մօտ տեսնելով անծանօթ գեղջկուհուն: Նա սկզբում նրան տեսիլ է համարում, բայց երբ Բաուտենդէլէյն հակառակն է պնդում, նա համոզւում է, որ այդ աղջիկը մարմնացած էակ է:

Բաուտենդէլէյի մեղմիկ համբոյրը նորից վառում է Հենրիխի դէմքը կենսունակութեամբ, նրա արիւնը առաջւայ նման արագ սահել է սկսում, նորից վերադառնում է նրա եռանդը, որ պահանջում է անվերջ աշխատանք, անդուլ գործունէութիւն:

Նա նոր կեանք, նոր ոգի ստացած մօտենում է պատուհանին և բացում: Արևի գեղածիծաղ ճառագայթները լուսաւորել են երկիրը և կարծես մրմնջում են լռելեայն «ապրիր և գործիր»...

Բայց ահա վերադառնում է Մագդան: Հենրիխը ընկնում է նրա գիրկը, բացականչելով.

—«Մագդա՛, Մագդա՛, ես նորից ապրում եմ. նորից ապրել եմ ուզում»:

Երրորդ և չորրորդ գործողութիւնները տեղի են ունենում լեռներում, ուր տեղափոխւում են Հենրիխը և Բաուտենդէլէյն: Այստեղ Հենրիխը աւելի մեծ, աւելի լայն նպատակի է անձնատուր լինում. այն է՝ շինել մի ամբողջ տաճար, որ պիտի տապալէ ամեն ինչ և արծարծէ սէր՝ եղբայրական անսահման սէր:

Երրորդ գործողութեան մէջ բեմ է դուրս գալիս պաստորը և սկսում է համոզել Հենրիխին վերադառնալ իր ընտանիքի մօտ և շարունակել իր նախկին կեանքը: Բայց պաստորի թէ խնդիրները և թէ սպառնալիքները անհետևանք են մնում:

Հենրիխը բացէ ի բաց մերժում է վերադառնալ Հովիտ:

Չորրորդ գործող. մէջ մենք հանդիպում ենք Հենրիխին դարբնոցում աշխատելիս. բայց նրա աշխատանքը առաջ չի գնում: Թզուկները հրաժարւում են նրան ծառայելուց: Իսկ անտառային ոգին ոչ միայն հեգնում է, այլ նաև արհամարհում է Հենրիխի ոյժերը:

—Այս մուրճով կըջախջախեմ քո գլուխը, բղաւում է Հենրիխը ոգու վրայ:

—Ա՛պա մի փորձիր. հանդարտ կերպով պատասխանում է ոգին: Չէ՞ որ քո հարւածը ինձ նոյնքան ցաւ կըպատճառէ, որքան ճանճի խայթոցը... Վրդովւած և յոգնած Հենրիխը պարկում է քնելու:

Դուրս է գալիս ջրային ոգին, սպառնում է Հենրիխին նրանով, թէ ինքը՝ ջրային ոգին և միւս ոյժերը թոյլ չեն տալ նրան տաճարի շինութիւնը վերջացնելու, խոտիւ վրէժ կըլուծեն և այդ բոլորից յետոյ նախագուշակում է, թէ կրգայ ժամանակ, երբ նրա ջրասոյզ զանդը կըհնչեցնէ իր ձայնը: Բարոյալէս ընկճւած Հենրիխը վեր է թռչում քնից, կանչում է Բաուտենդէլէյ Ֆէյային և խնդրում է նրանից վանել ծանր մտածմունքները. այդ ժամանակ ներքևից ձայներ են լսւում. դրանք Հովտի բնակիչներն են, որ գնում են նրա ստեղծագործութիւնը — տաճարը կործանելու: Հենրիխը առաջ է վազում. բարձրից գլորում է քարերի մեծ-մեծ կտորներ և դրանով ազատում թէ իրան և թէ իր ստեղծագործութիւնը: Նա հիացած է այդ յաղթութեամբ և ուզում է աւելի ուժեղացնել այդ զգացմունքը երաժշտութեամբ: Յանկարծ հնչում է կախարդական մեղեդին. Հենրիխը առաջ է վազում և տեսնում իր երկու զաւակներին, որոնք լեռն ի վեր են բարձրացնում մի բաժակ:

—Բարև, հայրիկ, ասում են նրանք, մայրիկը հրամայեց քեզ ողջունել:

—Ընորհակալութիւն, երեխայք. բայց ինչպէս է նրա առողջութիւնը:

—Մայրիկը խեղդւեց լճում...

—Իսկ այդ ինչ էք բերել:

—Մայրիկի արցունքները. նա խնդրեց քեզ յանձնել և ինչպէս դառն, ինչպէս աղի են այդ արցունքները: Այդ բոպէին լսւում է ջրասոյզ զանգի ուժգին զոռանջիւնը:

Վշտահար Հենրիխը մի կողմ է մղում Բաուտենդէլէյին և սլանում է դէպի Հովիտը, բացականչելով.

—Մագդա՛, Մագդա՛, գալիս եմ...

Չինգերորդ գործողութիւնը տեղի է ունենում պառաւ Վիտիխայի խրճիթի մօտ: Յայտնւում է ծանրը վշտից ընկճւած Բաուտենդէլէյն և վճռում է անձնատուր լինել ջրային ոգուն, որ վաղուց սիրահարւած էր նրա վրայ:

Անտառային ոգին ուրախացած պատմում է ջրային ոգուն Հենրիխի փախուստը և չարախինդ ծիծաղով ցոյց է տալիս նրա հրդեհւած տաճարը:

Լեռներից վար է իջնում ուժասպառ եղած Հենրիխը: Նա մի անգամ էլ յետ է նայում, նորից ուզում է վերև բարձրանալ, բայց պառաւ Վիտիխան կանգնեցնում է նրան.

—Մի համարձակւիր բարձրանալ. ապա թէ ոչ անդունդը կ'ընկնես: Այնտեղ բարձրանալ կարող են միայն թեւաւորները, իսկ քո թեւերն արդէն կտրւած են: Դու կոչւած էիր այդ մեծ գործի համար, բայց անարժան գտնւեցիր:

Հենրիխը պարկում է նստարանի վրայ և Վիտիխայից խնդրում է թոյլ տալ դէթ մի անգամ էլ տեսնւելու Բաուտենդէլէյի հետ: Իբրև պատասխան

պառաւը բերում է երեք բաժակ զանազան հեղուկներով լցած և ասում.

—Եթէ խմես առաջինից, այն ժամանակ մի բոպէով կըվերադառնան քո նախկին ոյժերը։

Երկրորդը կըվերադարձնէ քեզ ոգևորող հզօր ոյժը։

Իսկ երրորդը կարող է միայն մահ պատճառել։ Ով որ խմէ առաջին երկու բաժակները, նա պարտաւոր է խմել և երրորդը։

Հենրիխը խմում է առաջին երկուսը և կարոդանում է տեսնել Բաուտենդէլէյնին։ Վերջինս տալիս է նրան ըմպելու և երրորդ բաժակը և դրանից յետոյ Հենրիխը մեռնում է Բաուտենդէլէյնի գրկում, մրմնջալով՝

—Die Sonne kommt! Vie lang ist die Nacht!..

—Արեգակը դուրս է գալիս... Ի՞նչպէս երկար է գիշերը...

Այդ խօսքերով վերջանում է դրաման, որ թէև գլոյցի տպաւորութիւն է թողնում, բայց իր ներքին խորիմաստ բովանդակութեամբ շատ ու շատ մտորումների առիթ է տալիս։

(Վերջը միւս անգամ)

ՋՈՖԱՆՉ

I

Եղոր Մարտինիչ Օվակիմովը բուն Թիֆլիսեցի չէր։ Նա Զամախու քաղաքական դպրոցն աւարտելուց յետոյ, հաշտարար դատաւորի մօտ թարգման էր։ Բայց յետոյ փոխադրուեցաւ Թիֆլիսի պոստ-հեռագրատան կայարանը։ Մոցիքուլ Պէտրէն միշտ կրկնում էր իր ծանօթներին, որ Օվակիմովի Թիֆլիս գալն ու քնի մէջ պսակուիլը մէկ եղաւ։ Օվակիմովի զոքանչ՝ Կէկէլը մինչև օրս էլ կըրկնում է, որ այդ գործի մէջ խառն է սուրբ Սարգսի արդար մատը։

—Այս գործում ոչ թէ սուրբ Սարգսի արդար մատն է խառն, զայրացած ասում էր Օվակիմովը իր զոքանչին,—այս գործում քո մոցիքուլ Պէտրէի կեղտոտ մատն է խառն...

—Վուրթի, պատասխանում էր Կէկէլը,—մարդուս ճակտին ինչ գրած է, գրած է։ Հալբաթ քու իդբալն էլ էտէնց էր. թէ չէ մինք խաբիլու ինչ ունէինք... Դուն խօմ պզտի երեխայ չիս, վուր խաբիլ էինք... աղու. մէջաշ մատս չըկծիս... Օխնած, եքա լոնդի տղամարդ ես, ու մինք պիտի քեզ խաբիլ էինք. փառք Աստծու, խօմ գըլխումդ խիլք կար։

—Դուք ձեր օյինբազութիւններով մարդու գլխում խելք չէք թողնիլ. դուք ձեր խարդախութիւններով երկընքի հրեշտակին էլ կըմոլորացնէք...

—Ի լաւ, Եգոր ջան! մէջ էր մտնում Մաշոն,—անցկացած բանի վրայ չեն խօսիլ։

Մաշոն միշտ աշխատում էր իր մարդուն հանգստացնել. բայց պսակուելու օրից սկսած, կարծես, Օվակիմովի սրտին մի ահագին քար էր դրած, Կէկէլն էլ արդէն հասել էր իր նպատակին։ Նա իր մարդու մեռնելու օրից, ամբողջ երեսուն տարի սպասեց անհամբեր, դամիս-թեւաներ գնաց, մատաղներ կտրեց, և վերջապէս մի կերպ նաղդեց (կամ ինչպէս Թիֆլիզեցիք ասում են՝ սաղացրեց) իր աղջկան։ Կէկէլը միշտ ասում էր.

—Ախ, կամար-կատար քաղցր Փեթխային! Մաշինկիս մարդու տամ ու ես էլ փեսիս դովլաթում լլլամ!

Բայց այժմ փեսան, փոխանակ իր զոքանչին լլլացնելու իր դովլաթում, յանդիմանում է նրան, նախատինք է թափում նրա գլխին լարած որոգայթների համար։ Մաշինկան ծաղկեց, բացուեց վարդի նման, ճոխացաւ և երեսուն տարի անհամբեր սպասեց իր սոխակին. բայց նա չըկար... Մաշինկան թառամեց, աչքը ջուր կտրեց սպասելուց, բայց նա չըկար... Մաշինկան չաղ բելիլով ու կարմէնով ներկեց իր թոշնած երեսը, օծեց մազերը անուշահոտ իւղով, ոլորեց նրանց տաք ունելիքով, խճճեց, նազելի մէջքը սղմեց կորսետով, շրջեց բոլոր օբաները, նստած պատուհանի առաջ, սպասեց, երկար սպասեց. բայց նա չըկար... Եւ այսօր, ահա—վերջապէս, վերջապէս նա հասել է իր մուրազին!

II

Դ ինչ խաբար է, Մաշո ջան, ինչի ես էտէնց? հարցրեց մի առաւօտ Կէկէլը, ներս մտնելով։

Կէկէլը սովորութիւն ունէր միշտ այցելել իր աղջկան առաւօտները, երբ Եգոր Մարտինիչը գնացած էր լինում ծառայութեան, որովհետև զոքանչը շատ բան չի կարող ասել իր աղջկան փեսի ներկայութեամբ։

—Քա, ինչ է պատահի, ասա! շարունակեց Կէկէլը,—ինչի իս օրէ օր էտէնց աւիրւում և փիքր անում, գեթաղւանէ, Մաշինկա ջան? Քու ննգիրտիքը դիփ քիզ էրնեկ ին տալի, որ չինովնիկ մարդու գնացիր։ Ուրիշները մարդու ին գնում—կինք քաշում, ուրախանում, քէֆ անում. համա դու... համա դու... հը? Ինչ դարդ ունիս, ասա, գենացալէ!... բերախտութին խօմ չի պատահի? էգեբա քեզ քու մարդն է բեդամաղ արի? ինձմէն մի թագցրու, գենացալէ, ես ամեն բանի հանգը կու սովրացնիմ...

Բանից դուրս եկաւ, որ Եգոր Մարտինիչը ամեն օր մի որևիցէ պատճառով յանդիմանում, կշտամբում է Մաշոյին և նրա սիրտը շուռ բերում։ Մի անգամ Մաշոն երկու ափսէ արգանակի մէջ չորս աղաթաս էր դարդակել. իսկ կաթնաճաշ պատրաստելիս եռացած կաթը յանկարծ շուռ է տալ իր վրայ և ամբողջ շրջազգեստը թրջել։ Մի ուրիշ անգամ էլ Մաշոն իր մարդու տուժուրկի կոճակը կպցնելիս՝ յանկարծ ասեղով ծակում է իր ձախ բութ մատը և արիւնլայ անում։

—Եւ ամեն օր այսպիսի չնչին պատճառներով նա ինձ լացացնում է, ասաց Մաշոն, սրտից խոր ախ քաշելով։

Մօր և աղջկայ խօսակցութիւնն այնքան երկարացաւ, որ տևեց մինչև ժամի 2-ը։ Կէկէլը և Մաշոն տարացած խօսում էին առանց հերթի։ Մաշոն վրայ-վրայ էր տալիս, իր մարդուց գանգատւում, անիծում իր կեանքը, Եգոր Մարտինիչի հասցէին հազար տեսակ անվայել խօսքեր ասում։ Իսկ Կէկէլը լսելով այդ բոլորը, քանի գնում, այնքան կատաղում էր և իր փեսին հայհոյում։ Մի հարայ-հրոց էր սկսել, մի աղմուկ, որ կարծես տմբզակուիլ լինէր։ Այդ միջոցին արդէն սանդուղքներով բարձրանում

էր Եգոր Մարտինիչը, որ ծառայութենից յետոյ յոգնած և քաղցած՝ գալիս էր տուն հանգիստ գտնելու իր ընտանիքի մէջ և կազդուրելու իր ուժերը։ Նա նոր էր մտել նախասենեակը, երբ նրա ականջին հասան ներսի աղաղակն ու հարայ-հրոցը։ Մօտեցաւ սենեակի դռան, բայց կրկին յետ քաշուեց զգուշութեամբ և կծկուելով նախասենեակի անկիւնում, լարեց իր լսելիքը։

—Այն անասուածը ինձ ստիպում է կերակուր եփել, լուծք անել, շորեր կարել-կարկատել, ամբողջ օրը քոծի պէս թրև դալ, չարչարուել, տանջուել... էն օրը սևանայ, որ ես նրան ռաստ եկայ...

—Նրա կինքը սևնայ, վուրթի, նրա կինքը! Վուչ արժանանայ նա իր օթևանին! Դետինը պատուի ու նրան դիւիր տանի!

Եգոր Մարտինիչի կատաղութեան չափ չկար։ Լսում էր նա իր հասցէին ուղղած անարգանքն ու հայհոյանքները և ատամները կրճատցնում։

—Նոր մօդնի դերիաներ եմ ուզում կարել տայ, շարունակեց Մաշոն հեկեկալով,—ասում է՝ փող չկայ, պիկնիկ եմ ուզում սարքել, ասում է՝ փող չկայ, թատրոն եմ ուզում գնայ, ասում է՝ փող չկայ...

—Է՛, հուղեմ նրա գլուխը! վուր փուղ չուներ, ինչու պսակւից?

Եգոր Մարտինիչը զայրացած թքեց և ասաց ինքն իրան.

—Կեղտոտ, ստոր արարածներ! Ես երբ եմ խնդրել ձեր աղջկայ ձեռքը? Կամ եթէ ես մեծ ռոճիկ ստանայի ու գրպաններս լիքը լինէր փողով, մթթէ ես կրկատարէի ձեր պահանջները?

Եգոր Մարտինիչը ուզում էր յանկարծ ներս վազել սենեակը ու երկուսին էլ իր ոտների տակ ջարդ ու փշուր անել։ Բայց նա մի կերպով իրան զսպում էր և դարձեալ զայրացած ականջ դնում։

—Ախ, մայրիկ ջան, ինչ հողը տամ գլխիս? ես ինչ պէս ապրեմ նրա հետ, նա իմ կեանքը կըմաշի...

—Թող նրա կինքը մաշի! Գոռաց Կէկէլը,—ես էն կոյին աղջիկ իմ տի, վուր իր աչքի լուսի պէս մուղայթ կենայ, չէ թէ նրան տանջի ու հալումաշ անի? Թէ նա իր համա քոծ էր ուզում, թող իրանց կռոներեմէն մէկը նշանիլ էր... Աբա, վիս էկատրէբա! Քաղքի արմաղան աղջիկը տանի և կուխնումը ջանը մաշի! դիախ, դիախ! Կնիկ է տարի, թող ջանը դուս գայ, նրա համա քոծ ու բիճ բռնի, լաւ շախով հագցնի, զուգի, լաղաթով մանանի կալասկով թայգուլի նման... Նա իր զոնքչին էլ անտիս չըպլտի անի! Վուրթի, մի լսի նրան, թքիր նրա ասածների վրա! Վունցուր սիրտդ ուզում է, էնէնց էլ արա։ Քի համա քու կինքը ուփրո թանգ ածի, քանց նրա փնթփնթոցը... Ինչդադամ նրան մտիկ անիս, էնքան ուփրո դայմ գլխիդ կու նստի! Ջունը կու հաչի, քարանը կ'էհայ...

Այդ րոպէին ներս մտաւ Եգոր Մարտինիչը։ Կէկէլը կուլ տուեց բերանի խօսքը և լռեց։ Մաշոն իր վրդովմունքը ծածկելու համար իսկոյն դուրս գնաց սենեակից։ Եգոր Մարտինիչը մի խոր հայեացք գցեց իր այլայլուած զոքանչի վրայ և լուռ ու մունջ նստեց։ Կէկէլը մի փոքր լռութիւնից յետոյ, տեսնելով, որ փեսան ոչինչ չի ասում, նրա կասկածը փարատելու համար, յիշեց իր կուլ տուած վերջին խօսքերը և ասաց.

—Հա, էն էի ասում՝ շունը կու հաչի, քարանը կ'էհայ... Ին ձեր հարևան լպստուած Կատոն... Խոմ ճանչնում իս, վուրթի? էն վուր, մէ աչքը շլդիկ է?

Եգոր Մարտինիչը ոչինչ չըպատասխանեց։

—Էկիլ է ու զալմազալը աշխարհը դցի, միթօմ Մաշինկէն քուչումը լաւ ծի բուր է ածի... Ես էլ Մաշինկին ասի, վուր էն լպստածին վունչինչ ջուղաբ չըտայ, շունը կու հաչի, քարանը կ'էհայ... Մաշինկէն բոշիների թայը չի, վուր նրանց հիդ խօսք ու ջուղաբ անի...

III

Փոքր յետոյ ներս մտաւ Մաշոն և սկսեց ճաշի սեղանը բաց անել։ Կէկէլը մնաս բարով ասաց և կամենում էր գնալ. բայց Եգոր Մարտինիչը խնդրեց նրան սպասելու ճաշին։ Կէկէլը մի փոքր չեմ չեմ արաւ, թուրքի նման նազութուզ արաւ և նստեց, մանաւանդ որ նա այդ օրը ուզում էր մի կերպով խօսք բաց անել իր աղջկայ դրութեան մասին։ Եգոր Մարտինիչն էլ իր առանձին նպատակն ունէր։ Մաշոն զբաղուած էր ճաշի պատրաստութիւնով։

—Վուրթի, տեհնում իս? ասաց Կէկէլը իր փեսին,—վունց է չարչրում խիղճ աղջիկը... ինչ կո՛լի, վուր նրա համա մէ պզտի քոծ բռնիս, ջահիլ է, միզք է...

—Ի հարկէ, ի հարկէ. պատասխանեց Օվակիմովը, երկու մատով շփելով ընչացքը։ Այդ անսպասելի հաւանութիւնը փեսի կողմից շատ դուր եկաւ Կէկէլին, որ աւելի սիրտ առած՝ շարունակեց.

—Ա՛էկ էլ էն էի ուզում ասի, վուր քու անունին լայեղ չի, վուր քու կնիկը կուխնումը կերակուր էփի...

—Ի հարկէ, ի հարկէ։

—Կերակուր էփի ու էն ճերմակ, արմաղան ձեռները սիւցնի...

—Ի հարկէ, ի հարկէ։

—Ճերմակ, արմաղան ձեռները սիւցնի ու մէջքը կոտրելով պոլերը խտկի...

—Ի հարկէ, ի հարկէ։

Փեսայի զոյգ-զոյգ «ի հարկեներից» հրապուրուած, Կէկէլն էլ սկսեց զոյգ-զոյգ շարունակել իր պատուէրները։ Զոքանչի քէֆը այնպէս գալիս էր իր փեսից, որ քիչ էր մնում նրա բերանը համբուրի։ Առաջին անգամն էր, որ Օվակիմովը այսպիսի հաւանութիւններ էր տալիս իր զոքանչի ասածներին։ Այդ րոպէին Մաշոն բերեց արգանակը։

—Հա մէկ էլ էն էի ասում, վուրթի, շարունակեց Կէկէլը՝ խպշտելով անհամ արգանակը,—վուր էս տունը փոխիս ու շլդիկ Կատոյի ասէկոսէմէն միզ ազատիս.. Այ, բուլարի վրէն մի լաղաթով փաթեր *) բռնիս...

—Ինչի? Սոլոլակ էլ լաւ կըլինի, մէջ մտաւ Մաշոն, որ երեխայի նման հրճւում էր։

—Ի հարկէ, ի հարկէ։

—Մէ լաղաթով փաթէր բռնիս ու զալի համար լաւ սարք ու կարգ առնիս...

—Մէջքը կոտրելով պոլերը խտկի ու քրտինքի մէջ էրի...

*) Բնակարան

—Ի հարկէ, ի հարկէ։

—Քրտինքի մէջ էրի ու դուրսն էլ պրաստոյի շուրերով վուտով մանդայ...

—Վահ, ի հարկէ, ի հարկէ!

—Պրաստոյի շուրերով վուտով մանդայ ու խալխի միջին մասխարա դառնայ...

—Ի հարկէ, ի հարկէ։

Այստեղ Կէկէլը սկսեց մի մի թուել և նկարագրել բոլոր իրեղէնները, որ հարկաւոր էին դահլիճի համար։

Այդ րոպէին սենեակում բարձրացաւ մի գարշելի ճենճերահոտ։ Մաշոն բերեց տապական։ Հէնց այն ժամանակ, երբ Կէկէլը իր աղջկան «սովրացնում էր ամեն բանի հանդը», տապական բոլորովին այրուել, չորացել էր կրակի վրայ։

—Ինձ էլ, վուրթի, անտես չըպիտի անիս, շարունակեց Կէկէլը,—ես էլ եադ չիմ, քու դէդէն իմ... ինձ էլ պիտի խանդիսխան միտքդ գցիս ու մէ ծաղիկ էլ ինձ տաս։

Ծաղիկ խօսքը Կէկէլի լեզուով ընծայ էր նշանակում։

Օվակիմովը զզուելով տապակայի գարշահոտութիւնից, քիթը անձեռոցիկով ամուր ծածկել էր և լուռ ու մունջ սեղանից ետ քաշուել։ Ոչ ոք չըմօտեցաւ տապակածին։

—Ես էլ քու ծաղիկը կու տէհնիմ, կ'ուրախանամ ու քիզ կ'օրհնիմ ..

Եգոր Մարտինիչը, որի «ի հարկեները» արդէն սպառուել էին, յանկարծ տեղից վեր ցատկեց, առաւ տապակայի ափսէն և զայրացած շպրտեց իր զոքանչի առաջ։

—Ահա քո ծաղիկը! Քո աղջիկն է պատրաստել... Այս իսկի շան առաջը չեն բերիլ, ոչ թէ այն մարդու, որ ամբողջ հինգ ժամ անընհատ աշխատել է, չարչարուել, յոգնել և սոված եկել է տուն իր ընտանիքում կաղդուրելու իր ոյժերը...

—Վույ իմ աչքին! Դանա էսէնց էս քու զոնքչին պատիւ տալիս!

—Զոքանչ! դու զոքանչ չես, դու մի աւելորդ և միանգամայն վնասակար մսի կոյտ ես, որ զուր տեղ ես բռնում աշխարհիս երեսին և քո դասերով կործանում ես ուրիշի ընտանիքը։ Դա բաւական չէ, ստոր և գծուծ միջոցներով քո ողորմելի աղջկայ համար ամուսին որսեցիր, այժմ էլ կամենում ես այդ երկու ամուսիններին քո կեղտոտ ձեռներով տապալել դժբախտութեան անդունդը։ Քեզպէսները պատուհաս են աշխարհիս համար։ Քեզպէսները աւելի վարակիչ են, քան թէ չուման։ Ձեր թոյնն աւելի սպանիչ է, քան թէ օձինը! Որդի ես կրթել, որդի մեծացրել! փոխանակ տանտիկնութիւն սովրացնելու, փոխանակ պարզասիրութիւն քարոզելու, դու քո խեղճ աղջկայ գլուխը լցրել ես չիմար գաղափարներով... Դու քո զաւակից ընտանիքի մայր պիտի պատրաստէիր, պարզասէր և աշխատաւոր տանտիկին պիտի պատրաստէիր. դու պէտք է նրան արժանի անդամ շինէիր հասարակութեան համար, ոչ թէ իմ ձեռքը տայիր քեզ պէս մի այլանդակ և վնասակար մսի կտոր, որ կարող է ծնել մի քանի իր նմանները և չարիք լինել մարդկութեան համար... Վայրենի ծառին կարելի է պատուաստ անել, ազնուացնել և օգտակար դարձնել նրան, եթէ որ սպանիչ որդները չըսողան հողի տակից, չըկրծեն, չըմաշեն նրա արմատները։ Հեռու, հեռու իմ հիւանդ և վայրենի ծառից, ո՜ դու, հողի որդ! Ես իմ ականջով լսեցի մի ժամ առաջ թէ դու ինչ էիր քարոզում քո աղջկան .. Հեռու, հեռու պարազիտ! Այսուհետև չըհամարձակուես մօտենալ իմ շէմքին. դուրս...

Յարութիւն Թումանեանց

ԱԻՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

V. ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԾՆՆԴԿԱՆԻՆ ԵՒ ՆՈՐԱԾՆԻՆ

Ե՞րբ կարող է ծննդկանը վեր կենալ եւ աշխատել.—Ծննդաջուրք.—Ծննդկանի սնունդը.—Սթինֆով կերակրելը.—Ի՞նչպէս պէտք է կերակրել.—Երեխային լողացնելը։

Ծնունդից յետոյ կինը բնաւ չըպէտք է իսկոյն վեր կենայ անկողնից։ Մինչև անգամ այն կինը, որ ամրակազմ է և ծնուել է շուտով ու հեշտ, նա էլ գոնէ չորս օր պէտք է հանգիստ պարկի և դուրս չըգայ տանից։ Ինն օրից յետոյ կարելի է գործ սկսել, բայց ոչ ծանր աշխատանք. ծնունդից անմիջապէս յետոյ ծանրութիւններ կրել խիստ վտանգաւոր է։ Սաստիկ ճնշումից կըսկսի փորը ցաւել և արգանդը կիջնի, դուրս կըգայ։ Պատահում է երբեմն, որ կինը ջահիլ հասակում առաջին ծննդին վնասում է իր առողջութեանը, իսկ յետոյ մինչև խորին ծերութիւնը տանջւում։

Ծնունդից վերջը ծննդկանը պէտք է ամեն օր գիշերները լանայ հեշտոցը տաք ջրով և շատ մաքուր պահէ իրան։ Եթէ ամեն ինչ կարգին է, առաջին երեք օրերում ծննդաջուրքը (послѣродовое очищеніе) լինում է արիւնոտ, յետոյ արիւնը պակասում է, փոխւում մաղասային և ապա ընդունում է սպիտակաւուն գոյն։ Եթէ ծննդկանը ծիծ է տալիս երեխային, ծննդաջուրքը շարունակում է 3—4 շաբաթ, իսկ եթէ ծիծ չէ տալիս, տևում է փոքր ինչ աւելի երկար։ Եթէ ծննդկանը շուտ է վեր կենում կամ շարժողութիւններ անում (աշխատում է), ծննդաջուրքը կրկին արիւնոտ է դառնում, կամ թէ պատահում է արիւնահոսութիւն։

Ծննդկանը պէտք է գործածէ այնպիսի կերակուրներ, որոնց վարժ է իր ստամոքսը, որոնց սովոր է. նա պէտք է խուսափէ լուղոտ, դժուարամարս կերակուրներից, մանաւանդ խմորեղէնից։ Ամրութեան դէպքում, մարդ ըստիպւած է նիք տալ, իսկ նիքոցը պատճառում է արգանդի իջուածք և նա դուրս կըգայ ու կրկախւի ազդրերի մէջը։ Եթէ մայրն առողջ է, թէ իր և թէ երեխայի համար օգտաւէտ է ծիծ տալը, որ ինքը կերակրէ իր զաւակին։ Իսկ եթէ ինքը թոյլ է կամ պտուկները շատ փոքր են կամ ունի մի այնպիսի հիւանդութիւն, որ կաթից կարող է անցնել երեխայի վրայ, օր. բարակացաւ, պէտք է երեխային սննդել վարձելով ծծմայր, կամ կերակրել արհեստական կերպով, այսինքն կովի կաթով։ Երբ մօրը թոյլ չի տրւած ծիծ տալ, պէտք է կաթի ազատ ծորման համար ստինքի վրայ դնի տաքացրած բամբակ և քանի որ ծորում է կաթը, չուտի անմարս կերակուրներ։

Եթէ մայրը քիչ կաթ ունի կամ թոյլ է (վերջին

դէպքում պէտք է միայն մի քանի ամիս ծիծ տուչ և յետոյ ծծից կտրի) կարող է ծիծ տալով, երեխային ևս կերակրէ կովի կաթով (ջրախառն)։ Դրանով երեխան լաւ է սննդւում, մայրը պակաս է նեղում և յետոյ ծծից կտրելն էլ աւելի հեշտ է լինում։ Եթէ մայրն է կերակրում, պէտք է ծիծ տալն սկսի ծնունդից մի քանի ժամ յետոյ (5—12 ժամ) և եթէ առաջին անգամն է ծիծ տալիս, թող մանկաբարձուհին սովորացնի ծիծ տալու եղանակը։ Սննդելուս պէտք է սովորել երկու ստինքից էլ կերակրելու և ծիծ տալիս պէտք է երեխային սովորեցնել կանոնաւորութեան, այն է՝ ծիծ տալ մի որոշ ժամանակամիջոցից յետոյ, երկու ժամը մի անգամ ցերեկը, իսկ գիշերը երեք կամ չորս ժամը մի անգամ։

Եթէ ծիծ տալը ցաւալի է և կամ պզուկները տրաքուել են, պէտք է սննդելուց առաջ պզուկների վրայ հագցնել բեզինի պտուկ (որպէս զի երեխան ծծելիս ոչ թէ մօր պտուկը ուղղակի բերանն առնի, այլ բեզինի պտուկը, այդ պատճառով էլ մօր պտուկը քիչ կըգրգռւի և ծիծ տալը ցաւալի չի լինիլ)։ Պտուկները պէտք է զգուշութեամբ և փափուկ կտաւով սրբել ամեն կաթ տալուց վերջը։ Պէտք է նկատել, որ կաթ տալու միակ նպատակն է երեխային սնունդ տալ և նրա աճելուն օգնել, այլ ոչ թէ ծծով զբօսնեցնել կամ ծծով մոռանալ տալ նրա ուրիշ պէտքերը կամ ցաւը, որոնց համար նա աղաղակում է։ Նրա ամեն լացին կաթ տալու վարժեցնելը նորածնին կրկնապատիկ վնաս է, նախ որ առաջուայ կերած կաթի մարսողութիւնը չըկատարւած, նրա ստամոքսը բեռնելով անպատճառ կըվնասւի։ Երկրորդ իր մօրն անդադար անհանգստութիւն կըպատճառէ, նա մանաւանդ գիշեր ժամանակ, որով նա ցրտից և քնահատութիւնից հիւանդանալով, տալիք կաթը իր յատկութիւնը կըկորցնէ և երեխան կըվնասւի։

Երբ երեխան դառնում է վեց շաբաթական կամ երկու ամսական, կարելի է լաւ կշտացնել կէս գիշերից երկու ժամ առաջ, և մի անգամ էլ լուսաբացին։ Վեց կամ եօթն ամսական մանուկին, առաջին ատամ երևալուց յետոյ, կարելի է կաթից ջոկ ուրիշ ուտելիք էլ տալ, որովհետև այդ հասակին մանուկի ստամոքսն այնքան զարգացած է, որ կարող է մարսել ջրալի կերակուրներ։ Թեթև մսաջուրը պէտք է ուտեցնել ճիշտ օրուայ որոշեալ ժամերին կաթ ուտելուց երկու ժամ յետոյ, որից վերջը բան խմեցնելու մտքով չըպէտք է կաթ տալ։ Մանուկի ծարաւը կոտրելու համար կարելի է ջուր, շաքարաջուր, թէյ, նոյն իսկ ջրախառն գինի խմեցնել։ Մսաջուրը կամ այլ և այլ խառնուրդներով արգանակը կարելի է տալ օրն երկու անգամ, երբ երեխան դառնում է ինն կամ տասն ամսական։

Բացի սնունդից մանուկին հարկաւոր է մաքրութիւն։ Զաբաթը մէկ կամ երկու անգամ մանուկին պէտք է լողացնել տաշտի մէջ չորս հինգ վայրկեան տևողութեամբ։ Ջրի ջերմութիւն պէտք է լինի 28° Ռէոմիւրի ջերմաչափով։ Ջուրը մարմնից դուրս եկած հիւթերը վրայից հանելով, անդամներին տալիս է դիւրաշարժութիւն, ջղային գրգռութիւնը հանդարտեցնում և առհասարակ հանգստացնում է։ Լողացնել կարելի է օրուայ ամեն ժամին, բայց առաւօտն աւելի յարմար է։

Երեխաներին լողացնել տանը և բնաւ չըտանել բաղանիք։ Երկար ժամանակ նրանց չըպէտք է տանել բաղանիք, որովհետև սրանից խիստ շատ անգամ ամենածանր հիւանդութիւններ են առաջ գալիս։ Սոսկալի տաքութիւն, վնասակար գոլորշիներ, երբեմն էլ գարշահոտութիւն, ահ ու սոսկում, ճիչ ու երկարատև զայրոյթ, ահա մանուկի վայելածն բաղնիքում։

(Կըշարունակի)

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

VI

Աշխատանքի բաժանման զարգացումը

Միշտ և ամեն տեղ չի կարելի աշխատանքը նոյն չափով բաժանել։ Բաժանման աստիճանը կախւած է զանազան պայմաններից։ Մեր յետ ընկած գիւղերում գիւղացի ընտանիքը պատրաստում է ինքը իր համար բոլոր հարկաւոր իրերը։ Միևնոյն գիւղացին համ խրճիթն է շինում, համ երկրագործութեամբ է զբաղւում, համ բրդեղէն շալեր է գործում, համ տրեխ է շինում իր համար, համ իր գործիքներն է նորոգում և այլն։ Իսկ մեր քաղաքներում արդէն յիշեալ գործողութիւններից իւրաքանչիւրը առնուազն մի վարպետի գործ է։ Ասում ենք առնուազն, որովհետև տեղ-տեղ բաժանումը աւելի հեռու է գնացել և օրինակ գործիքների փայտեղէն մասերը մի վարպետ է շինում կամ նորոգում, իսկ երկաթեղէն մասերը մի ուրիշը։ Մեր գրականութեան մէջ տեսնում ենք, որ շատ անգամ միևնոյն գրողը համ վէպեր է գրում, համ քննադատութիւններ, համ քաղաքական յօդուածներ, համ բարոյական խրատներ... միւս կողմից էլ գուցէ մասնաւոր դասերով է զբաղւում, կամ պաշտօն ունի քաղաքային վարչութեան մէջ, փաստաբանութեամբ է պարապում և այլն։ Մինչդեռ աւելի զարգացած գրականական ասպարիզում վիպասանը նւիրւած է իր վէպերին, քննադատը իր քննադատութեան և քաղաքագէտ գրողը իր քաղաքական գրւածքներին։ Այդ ի հարկէ շատ աւելի յարմար է գործի յատկութեան համար։ Ենթադրենք որ մի ֆրանսիացի վիպասան ամբողջ տարին ուշն ու միտքը դնում է մի վէպի վրայ, լաւ ուսումնասիրում է իր ընտրած առարկան, մինչև իսկ մեծ ծախսեր է անում (օրինակ ճանապարհորդում է) նոյն նպատակի համար և իր ամբողջ ժամանակը և ոյժերը գործ դնելով պատրաստում է մի ընտիր վիպասանութիւն, որի մէջ դժւար է լինում որոշել, թէ որքան տաղանդ և որքան աշխատութիւն կայ։ Եւ այդ վէպը այնպէս քաղցր կերպով գնում է ֆրանսիացի ընթերցողի կողմից, որ վիպասանը փառաւոր կերպով վարձատրում է, այնպէս որ նա կարողանում է պահել իր ընտանիքը, կարողանում է ինքը պատշաճաւոր կեանք անցուցանել, վերջապէս կարողանում է յատկապէս իր կոչման, զբաղմունքի հետ կապւած ծախսեր անել։ Հիմա երևակայեցէք ձեզ, որ նոյն կերպով վարւէ հայ վիպասանը, այսինքն ամբողջ ժամանակը և ուժերը նւիրելով մի տարուայ ընթացքում մի վէպ շարադրէ։ Այնուհետև նա պիտի հազար մարդուց մինչ-

Փոքրիկ Զարուճքը

նաթ քաշէ, որ միջոց գտնէ վէպը տպել տալու։ Իսկ տպագրելուց յետոյ նա չէ կարող հեշտութեամբ այնքան ծախել, որ գոնեա թղթի ծախսը դուրս գայ։ Այդպիսի դէպքում նա խոխելագար չէ որ իր ամբողջ կեանքը այդ վէպերին նուիրէ, քանի որ այդպիսով խաչտառակ դրութեան մէջ կըդնի թէ իրան և թէ իր ընտանիքը։ Ի՞նչպէս ոգևորուէ նա բնութեան տեսարաններով և մարդկութեան պատմութեամբ, երբ իր փոքրիկը կաթ է ուզում, միրգ է ուզում, շապիկ է ուզում, իսկ տաղնդաւոր հայրիկի գրպանումը մուկն է պարում... Այսպէս էլ բուն տնտեսական ասպարիզում։ Գիւղական կեանքում, ուր մարդիկ բաւականանում են հասարակ հագուստեղէնով, չեն կարող բոյն դնել նուրբ դերձակներ և կօշկակարներ, որոնք սակայն քաղաքում անհրաժեշտ են։

Պարզ է ուրեմն, որ աշխատանքի բաժանման աստիճանը կախւած է պահանջի քանակութիւնից և որակութիւնից։ Իսկ վերջին հանգամանքը կախւած է քաղաքակրթութեան աստիճանից։ Բայց նկատւում է և հակառակ երևոյթը։ Այսինքն որքան աշխատանքը բաժանւում է, քանակութիւնը շատանում է, որակութիւնը նրբանում է, նոյնքան պահանջն էլ աւելանում է (էժան և յարմար առարկաներ աւելի շատ դնողներ են ունենում)։ Եւրոպայում աշխատանքը շատ աւելի նուրբ է բաժանւած քան Ասիայում։ Օրինակ ասիական պետութիւնների մէջ մէկ նախարարը համ օրէնքներ է հնարում, համ հսկում է նրա կատարելու վրայ, համ դատաստան է անում։ Իսկ քաղաքակիրթ պետութիւնների մէջ օրէնսդրական, դրծադրողական և դատաւորական առանձին լարձրագոյն ատեաններ կան։ Դեռ աւելի. լուսաւորութեան նախարարը ուրիշ է, գինուորականը ուրիշ, երկրագործականը ուրիշ և այլն։

Այդպիսով կարելի է հաստատ ասել, որ աշխատանքի բաժանման զարգացումը կախւած է քաղաքակրթութեան զարգացումից և վերջինս էլ առաջինից է կախւած։ Ուրիշ խօսքով ասած՝ աշխատանքի բաժանումը եւ քաղաքակրթութիւնը փոխադարձաբար ազդում են իրար վրայ։ Ուր բնական կերպով քաղաքակրթութիւնը զարգանում է (պահանջը շատանում ու նրբանում է) այնտեղ կամայ ակամայ հարկաւոր է լինում աշխատանքը բաժանել։ Իսկ ուր արհեստական կերպով, նոյն իսկ բռնի ոյժով քաղաքակրթութիւն են ուզում մտցնել (որպէս Պետրոս մեծը Ռուսիայում կամ Նասրէդդինը Պարսկաստանում և այսօրուայ Եւրոպան Տաճկաստանում), այնտեղ հարկաւոր է արհեստական կերպով աշխատանքի բաժանում մտցնել (առանց այդ՝ բարեկարգութիւնները անհնար կըլինեն)։

Նոյնանման երևոյթը տեղի է ունենում և օրգանիզմի զարգացման ասպարիզում։ Ամենահասարակ կենդանիները, ամֆիբիաները, որոնց ամբողջ մարմինը բաղկացած է պրոտոպլազմա կոչւած հեղուկից, ոչինչ մասեր կամ օրգաններ չունին։ Նրանք թերևս միայն սովի զգացում ունենալով ժամանակ առ ժամանակ իրանց ամբողջ մարմնով ներս են քարշում հարկաւոր նիւթը։ Աւելի բարձր աստիճանի վրայ կանգնած արարածները ճիւղեր ունին, որոնք մի տեսակ ձեռքի ու ոտքի տեղ են ծառայում։ Ապա գտնում ենք մենք աշխարհքում կենդանիներ, որոնք մի շարք օրգաններ ունին, բայց օրինակ, որոշ ոսկրային մաս չունեն։ Այդպէս փոքր առ փոքր բարձրանալով հասնում ենք մենք վերջ ի վերջոյ բնութեան գլուխը կանգնած արարածին, որ մարդ է կոչւում։ Մարդն ամենանուրբը, ամենազգայուն, ամենասրամիտ արարածն է և միևնոյն ժամանակ նրա մարմնի մէջ աշխատանքի բաժանումը (օրգանների բազմատեսակութիւնը և կազմակերպութեան բարդութիւնը) ամենազօրեղ կերպով է զարգացած։ Եւ առհասարակ որքան մի կենդանի աւելի բարձր է կանգնած իր հոգեկան յատկութիւններով, նոյնքան աւելի նուրբ է կազմակերպւած նրա մարմինը։ Հէ՞ երևում այստեղից, թէ որքան մեծ նշանակութիւն ունի աշխատանքի կազմակերպութիւնը։

Հիւլէ

Աշխարհագրական

ՄԱՐԱՂԻ ՀԱՅԵՐԸ

(Թուցիկ ակնարկ՝ անցեալի եւ ներկայի վրայ)

I

Ազգերի զարգացման և յառաջադիմութեան նշանները երևան են գալիս այն ժամանակ՝ երբ դրանք զգում են զանազան կրթող հիմնարկութիւնների պէտքը, որպիսիք են օրինակ՝ դպրոց, ընթերցարան, լրագրութիւն, թատրոն, հանդէսներ, բարենպատակ ընկերութիւններ և այլն և այլն, որոնք հանդիսանում են առաջադիմութեան ֆակտորներ։ Որ ազգի մէջ որ բազմաճիւղ, շատ են լինում այդպիսի հիմնարկութիւններ՝ այդ մի ապացոյց է, որ այդ ազգը բարոյական աւելի բարձր աստիճանի վրայ է կանգնած։ Մի տարրական դպրոց՝ բաւականութիւն չըտալով նրա մտաւոր պահանջման՝ հաստատւում է միջնակարգ, ապա բարձրագոյն։ Այդպէս և ուրիշ կրթող հիմնարկութիւնները։ Մենք հայերս, որ զարգացման միջին աստիճանին հազիւ ենք հասել՝ առ հասարակ ընդունւած ենք որպէս կուլտուրական ազգ, որպէս առաջադիմութեան և զարգացման ընդունակ տարր։ Մենք պիտի աշխատենք, ջանք դնենք չըշեղել այդ լուսաւոր հոսանքից, որով արդարացրած կըլինենք միևնոյն ժամանակ և օտարազգի մտածողների կարծիքը։

Հայ ազգը յայտնի է որ ենթարկւեց երեք պետութեան իշխանութեան.—Օսմանեան, Ռուսաց և Պարսից։ Առաջին երկու պետութեան տակ գտնւող հայերը աւելի բախտաւոր գտնւեցան կուլտուրական տեսակէտից քան երրորդը, պարսկահայը։ Դրանք, տաճկահայը և ռուսահայը, գտնւելով այնպիսի տերութիւնների մէջ՝ որոնք հարևան և մի մասով միաւորւած լինելով Եւրոպա կոչւած աշխարհամասով՝ այդ երկրի առաջադիմական հոսանքը աւելի հեշտութեամբ մուտք գործեց դրանց մէջ. բայց պարսկահայը այդ բախտը չունեցաւ։ Նա գտնւելով մի երկրի մէջ՝ որպիսին է Պարսկաստանը՝ թէ երկրի հեռաւորութիւնը լուսաւոր Եւրոպայից և թէ տիրող ազգի տգէտ և ֆանատիկ լինելը թոյլ չըտւին նրան առաջ խաղալու։ Նրա ամեն մի քայլը դէպի կուլտուրական ասպարէզը հանդիպում էր այնպիսի խոչընդոտների՝ որի դէմ մաքառել՝ իրան ուժից շատ վեր էր։ Եթէ այսօր պարսկահայը փոքր ինչ առաջ դնալու որամադրութիւն է ցոյց տալիս՝ դրա պատճառը հանդուցեալ լուսամիտ Նասր-էդ-Դին Շահի մի քանի անգամ Եւրոպա ճանապարհորդելը և եւրոպացիների Պարս-

կաստանում մուտք գործելն է, որով պարսկահայը միջոց ունեցաւ ոտք դնել զարգացման առաջին աստիճանի վրայ։ Անհերքելի է մանաւանդ և այն փաստը՝ որ զանազան հոգևոր անհատներ ևս մեծ զարկ տուին պարսկահայոց մտաւոր պահանջներին, որպիսի էր օրինակ՝ Ստեփանոս արք. Մխիթարեան, որին պարսկահայը այսօր պատկառանքով է յիշում։

Պարսկահայերիս մտաւոր վերածնութիւնը սկսւում է շատ մօտիկ անցեալից. հազիւ տասնհինգ — քսան տարի լինի որ նա զգացել է առաջադիմութեան կարիքը։ Բայց այդ կարիքը միայն զգացել է կենդրոնավայրերում, ուր կան որոշ թիւով հայեր, օրինակ՝ Թաւրիզը, Թէհրանը և փոքր ինչ էլ Սալմաստի գաւառը. իսկ միւս գաւառական հայերը գրեթէ գտնւում են աննախանձելի, ողորմելի կացութեան մէջ. որպիսիք են՝ Մարաղա, Միանդաբ, Սովուճբուլաղ, Սուլդուզ և այլն։ Ես անձամբ մի քանի տարիներ գտնուելով այդ գաւառներում՝ (Սուլդուզ, Սովուճբուլաղ եւ Միանքաբ) վերջը եկել եմ այն եզրակացութեան, որ եթէ դրական միջոցներ ձեռք չառնուի՝ այդ տեղերում գտնուող հայերին արդէն կորած պիտի համարել, որոնք հետզհետէ ձուլւում են տիրող քուրդ տարրի հետ։ Որպէսզի ազգի առաջադիմութեան նախանձախնդիր անհատներն աւելի որոշ գաղափար կազմեն այդ գաւառներում գտնուող հայերի վրայ՝ մենք ժամանակին կըտանք մի քանի պատկերներ դրանց կեանքից, իսկ ներկայ յօդուածով խօսքներս պիտի մասնաւորենք Մարաղի հայերի վրայ, որովհետև Մարաղի հայը թէ թիւով և թէ կրթութեամբ միւս գաւառների վրայ գերիշխան է հանդիսանում։

II

Մարաղա քաղաքը գտնւում է Ատրպատական նահանգում, Որմիոյ ծովակի հարաւ-արևելեան կողմում։ Քաղաքի հիւսիսային կողմում բարձրացած է Սահանդ գագաթը, որ Զագրու լեռնաշղթայի արևելեան ճիւղի ամենաբարձր կէտն է, որ 11,000 ոտնաչափ բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից։ Քաղաքը զետեղուած է երկու բլրակների մէջտեղում արևմտեան և արևելեան կողմից. իսկ հիւսիսային կողմից, ինչպէս ասացինք, բարձրացած է Սահանդը։ Հարաւային կողմում ձգուած է մի ընդարձակ դաշտավայր, որի վերջաւորութիւնը ծածկուած է ծովով։ Քաղաքը շատ ջրառատ է, բազմաթիւ աղբիւրներով, առուներով և գետերով, որոնք սկիզբ են առնում Սահանդից։ Ամենամեծ գետը կոչւում է Սոֆի, խիստ սրնթաց է և անուշ ջուր ունի, որ ուղիղ քաղաքի արևմտեան պարիսպը շոյելով թափւում է ծովը քաղաքից տասն հինգ վերստ հեռու։ Մարաղան Պարսկաստանի վաճառաշահ քաղաքներից մէկն է, զարդարուած բազմաթիւ այգիներով և բուսականութեամբ։ Ամենագլխաւոր բերքը՝ սաբզա կոչուած չոր չամիչն է, որ տարէնը մօտաւորապէս 600,000 պուդ արտադրւում է Ռուսիայում։ Երկրորդական տեղը բռնում են՝ կեարմեանը, սալորը, ընկոյզը, նուշը և պիստակը, որոնք նոյնպէս Ռուսիա են գնում։

Կլիման կարելի էր բարեխառն համարել, եթէ չըլներ ամաւայ տօթի առաւելութիւնը։ Բնակիչը թէև աշխատաւոր մշակ է՝ բայց դրանց ֆիզիկական կազմուածքը խախտել է ափիոնի թոյնը, (այդ ախտը միայն պարսիկների մէջ է տարածւել). արականն սեռը միանգամայն վտիտ ու կմախքացած է, իսկ ընդհակառակը իգական սեռը առոյգ և մսոտ է։ Մօտաւորապէս 50—60 հազար բնակիչ ունի, որից միայն 1000-ը հայ է, իսկ մնացածը՝ պարսիկ։ 1000 բնակիչ հայերից՝ 100-ը Թաւրիզից և այլ քաղաքներից նորեկներ են, որից մի քանիսը պարապւում է դերձակութեամբ, ոսկերչութեամբ, իսկ մնացածը վաճառականութեամբ։ Ի դէպ է ասել՝ որ սաբզի սեզօնը սկսւելուց (սեպտեմբերից) նորեկ վաճառականների թիւը գրեթէ հաւասարւում է տեղացի բոլոր հայերին։ Մնացած 900 բնակիչը բնիկ Մարաղացիներ են, որոնց մեծամասնութիւնը պարապւում է հիւսնութեամբ, որ սաբզի համար արկղներ են պատրաստում, մի մասը՝ հրացանագործութեամբ, մի մասը քարտաշութեամբ և ջրաղացպանութեամբ։

Շ. Արամեան

ԳԵՂԱՐՈՒԵՍ

Թատրոն, երաժշտութիւն

Հայկ. ներկայացումներ Ղուզում

Ղաբաթ, յուլիսի 25-ին ի նպաստ պ. Օհանեանի խաղացին առաջին անգամ «Կեանքի Խնջոյքում» 4 գործ. դրաման հեղ. Ալեքսանդրովի, թարգ. Պապեանի։

Պիեսի գլխաւոր հերոսի՝ Խոտնևի դերը կատարեց պ. Օհանեանը։ «Կեանքի Խնջոյքում» պիեսը ունի շատ առաւել կողմեր. հեղինակը նրա մէջ դաստիարակութեան հարց է շօշափում։ Պիեսի բովանդակութիւնն այս է.—Խոտնեւը (պ. Օհանեան) խելագարի պէս սիրում էր իր կնոջը՝ Ելենային (Օր. Վարդիթեր)։ Ելենան, շնորհիւ իր պառաւ, բարոյապէս փչացած կոկէտ մօրը (տ. Զաբէլ), ստանում է վատ դաստիարակութիւն և այդ բարի ձգտումով օրիորդը մօր ազդեցութեան ներքոյ՝ մի թեթևամիտ, թոյլ բնաւորութեան տէր կին է դուրս գալիս։ Մինչդեռ նրա ամուսին Խոտնևը դրական մարդ էր և միշտ զբաղուած լինելով տնտեսական գործերով՝ ժամանակ չէ գտնում կնոջ ժառանգած վատ յատկութիւնները ուղղելու։ Նա երբէք չէր հաւատում, որ իր կինը անհաւատարիմ կարող է գտնուել։ Խոտնեւի սիրելի ընկեր բանաստեղծ Սիֆինը (պ. Պետրոսեան) շուտ-շուտ յաճախում էր իր ընկերոջ տունը և Ելենային զբաղեցնում էր. յաճախ գետի վրայ նաւակով զբօսանք էին կատարում։ Թէև Խոտնեւի ծառան աշխատում էր իր տիրոջ մէջ կասկածներ առաջացնել դէպի իր կինը, բայց նա չէր հաւատում մինչև որ սեպհական աչքերով չըտեսաւ Ելենային Սիֆինի հետ համբուրւելիս։ Ելենան ապահարկան է առաջարկում Խոտնևին և մի առ ժամանակ ապրում է Սիֆինի հետ։ Սակայն վերջինս էլ, երբ նրա պահանջներին չէ կարողանում բաւականութիւն տալ, Ելենան թողնում դրան ևս, տպտ իբրև հարճ ապրում է հարուստ գործարանատէր Դերգունովի հետ (պ. Վրոյր)։ Ելենան թէև նրան ատելով ատում էր, բայց շնորհիւ նրա ոսկիների, մի կերպ կեանքը քարշ է տալիս։ Վերջապէս Խոտնևը այդ բո-

լորը լսում է. երկար ժամանակով հիւանդանում է և մինչև անգամ խելագարի աստիճանի է հասնում։ Սիրող սիրտը չէ կարողանում հանգիստ ապրել, վճռում է գնալ Ելենայի մօտ։ Ելենան ընդունում է նրան և նրա հրամանով Դերգունովը սենեակից դուրս է գնում ու իրանք մնում են մենակ։ Այդ տեսարանում Խոսնեւը խոստանում է մոռացութեան տալ ամեն բան, և խնդրում է Ելենային կրկին վերադառնալ կեանքի խնջոյքը և ապրել այնպէս՝ ինչպէս որ առաջ էին ապրում։ Սակայն ամուսնու առաջ արդարանալու համար մեղադրում է իր մօրը, որ այդպէս է իրան դաստիարակել և իր դժբախտութեան պատճառը միայն մօրն է համարում. բայց և այնպէս մերժում է Խոսնեւի խնդիրքը. այդ միջոցին Խոսնեւը խելագուրկի նման սպանում է Ելենային ասելով. «Ոչ, ես խելագար չեմ, ես քեզ չսպանեցի, այլ դու ինձ քեզ սպանեցիր»։

Պ. Օհանեանը Խոսնեւի դերը յաջող կատարեց։ Պ. Մամիկոնեանը այն տեսարանում, որ պիտի հարաւեր բժիշկներին, փաստաբաններին և վաճառականներին, չըյաջողեցաւ նրան. նա չըկարողացաւ նենգամիտ, խարդախ, ինտրիգանտի տիպ ստեղծել։ Վատ չէր օր. Վարդիթերը. միայն իրական դերեր խաղալու ժամանակ հարկաւոր է մի քիչ աշխատանք գործ դնել։ Հասարակութիւնը մի քանի անգամ ծափահարութեամբ բենեֆիցիանտին բեմ հրաւիրեց և նրա խաղը վարձատրեցին դրամական ընծայով և թարմ ծաղիկներից մի փունջով։ Այդ երեկոյեան բոլոր տոմսակները վաճառուած էին. հասարակութեան թատրոն գրաւելուն ոչ սակաւ նպաստեցին «զարերը», որ ներկայացումից յետոյ տևեցին մինչև ժամը 3-ը։

—Հոկտեմբերի, յուլիսի 22-ին, ի նպաստ պ. Մամիկոնեանի խաղացին առաջին անգամ «Զարագուշակ քայլ» պիեսը։ Բենեֆիցիանտը պիեսի գլխաւոր Պեչորինի դերն էր խաղում։ Թէև նա ըմբռնել էր իր դերը, բայց չըկարողացաւ պատկերացնել մի տաքարիւն, տղայամիտ մարդու պատկերը։ Այդ տեսակ պիեսը զաւառական բեմի վրայ չըպէտք է դնել։ Ներկայացման մի քիչ կենդանութիւն էր տալիս օր. Վարդիթերը։ Լաւ էր նոյնպէս և տ. Զաբէլը։ Ներկայացումից յետոյ օր. Մարի-Հրանուշը և պ. Պետրոսեանը յաջողութեամբ կատարեցին «Մկնիկ» վոդեւիլը։ Դահլիճը ծայրէ ի ծայր լի էր։ Պէտք է նկատել որ թատրոնի հասարակութիւնն իր ժամանակին չեն գնում իրանց տեղը նստելու. այսպիսով իրանց անկանոնութեամբ խանգարում են միւսների ուշադրութիւնը։

Ադ—Բար

Քննադատական

Գրականութիւն եւ մամուլ

Վիշաու անգլիական ընկերութեան նաւթահանքը հագուստ այրելով, մի խումբ բանւորներ հերդեհին զոհ դարձան։ Ընկերութիւնը, որպէս վայել է քաղաքակիրթ տնտեսական հիմնարկութեան, կամաւոր կերպով յանձն է առել նիւթապէս ապահովացնել անբախտացած բանւորների ընտանիքները, մի բան, որ հագեի միւս արդիւնաբերողների կողմից սովորաբար անուշադիր է թողնւում։ Այդ առիթով Кастій լրագիրը նկատում է.

„Մի կողմից՝ մենք գործ ենք դնում եւրոպական զարդարանքի ամենանուրբ արտադրութիւնները և օտար հնարագիտութեան ամենակատարեալ շինուածքները, իսկ միւս կողմից՝ չենք իւրացրել կեանքի ամենատարրական սկզբունքները, առանց որոնց չէ կարող կանգուն մնալ ոչ մի գործունէութիւն, ինչպէս և տնտեսականը։ Մենք ունինք մտաւորապէս զարգացած փոքրամասնութիւն, որ լուրջ կերպով դատողութիւններ է անում բարձրագոյն առարկաների և առաջադիմական սկզբունքների մասին, բայց միևնոյն ժամանակ մեր աշխատաւոր ազգաբնակութեան անթիւ բազմութիւնն աշխատում է խաւարի մէջ, ուր չէ թափանցել գիտութեան և մտքի մի հատիկ ճառագայթ„։

Նոյն խնդրի մասին արդար յուզմունք է արտայայտում Мсакр ասելով՝

„Բայց բարոյական պարտաւորութիւնները չեն հասկանում տգէտ, թերուս տեղացիները, որոնք բանւորի վրայ նայում են իբրև գրաստի վրայ, որոնք կարծում են թէ բանւորը, ստանալով վարձ իր թափած քրտինքի համար, միևնոյն ժամանակ ծախում է գործատիրոջ իր անձը, իր ընտանիքը։ Այդ անմիտ հասկացողութեան արդիւնքն այն է, որ տեղացիների գործարանում վնասուած բանւորները կամ պէտք է լուռ ու մունջ մնան, կամ թէ մի վարձատրութիւն ստանալու համար տարիներով մաշեն դատարանի շէմքը, մրցեն գործատիրոջ հմուտ փաստաբանների հետ„։

Բայց մենակ հագուն չէ, ուր բանւորի դրութիւնը խիստ աննախանձելի է։ Ինչպէս երևում է, մեր ընդհանուր հայրենիքի շատ անկիւններում բանւորի դրութիւնը բարւոքման կարօտ է։ Ահա թէ ինչպէս է նկարագրում «Жизнь и Шк.» այն բնակարանները, ուր ապրում են կիեւի բանւորները։

„Դժւար է երևակայել մի աւելի հակառողջական բան, քան այդ բնակարանները։ Ցածր, փոքրիկ սենեակներ, շատ փոքրիկ լուսամուտներով։ Պատերի վրայ կառուցած տախտերը բաժանում են սենեակը երկու յարկի, տախտերի արանքում մնում են նեղ անցքեր։ Այդ որջերի մէջ գիշերում են հարիւրաւոր անտէր մարդիկ։ Սրանք պարկում են տախտերի վրայ միմեանց կպած, որովհետև այստեղ իւրաքանչիւր վերջակ տեղը գին ունի։ Նոյնպէս լցուած են մարդկանցով տախտերի տակերը և անցքերը։ Ոտք դնելու տեղ չըկայ, բոլորը լիքն է մարդկային մարմիններով, ուր պառկոտած են զանազան ձևերով և հագուստներով։ Օդը այստեղ այն աստիճանի փչացած, խեղդող, պղտորուած է, որ նոր ներս մտնողը հազիւ կարող է ոտների վրայ կանգնել և անրզդայ չրդառնալ„ և այլն և այլն։

Ի՞նչ անել ուրեմն, միայն գումարատէրերի «Гуманическій» զգացմանց ապաւինելով, մեծ արդիւնք չի ստացուիլ։ Հարկաւոր է ինքնօգնութիւն զարգացնել մեր աշխատող դասակարգերի մէջ։ Այդ տեսակէտից ուրախալի է հետևեալը, որ հաղորդում է «Биржѣ. Вѣд.» Թերթի Խարկովի թղթակիցը.

„Խարկովի գործարաններում և երկաթուղու արհեստանոցներում աշխատող վարպետների թիւը 10 հազարի է հասնում։ Այդ արհեստաւոր բազմութիւնը, չընայելով իր ամենածանր աշխատանքին, բոլորովին ոչնչով ապահովուած չէ, և նրա ապագան ըստ մեծի մասին շատ տխրալի է լինում։ Ուստի այս օրերս Խարկովում հիմնուած արհեստաւորների փոխադարձ օգնութեան ընկերութիւնը վերին աստիճանի համակրելի հիմնարկութիւն է։ Անկասկած է, այդ ընկերութիւնը, որ առաջինն է Ռուսիայում, շուտով կունենայ հազարաւոր անդամներ„։

Եթէ աւելացնենք և այն, որ մեր բոլոր քաղաքներում, օրէցօր աւելանում է արհեստաւորների թիւը, կըտեսնենք, որ նրանց դրութեան բարւոքումը շատ մեծ նշանակութիւն ունի։

„Վերջին ժամանակները—նկատում է С. Пет. Вѣд. լրագիրը—Պետերբուրգը աւելի ու աւելի ապաստարան է դառնում սեփականազուրկ դասակարգի համար, որ անդիմադրելի ոյժով ձգտում է դէպի այն-

տեղ, յուսալով որ և է աշխատանք գտնել։ Եւ իսկապէս, մինչդեռ ուրիշ դասակարգերը աւելացել են վեց տարուայ ընթացքում միայն 6 տոկոսով, գիւղական դասակարգը աճել է 30 տոկոսով»։

Ահա ուրեմն ուշադրութեան արժանի, ծանրակշիռ խնդիրներ, որոնց լուծելու համար գլուխ է հարկաւոր, ոյժ է հարկաւոր, եռանդ է հարկաւոր։ Իսկ մեր մամուլը բան ու գործը թողած՝ զբաղուում է շարունակ ինչ որ քահանայական-եկեղեցական հարցերով։ Զարմանալի բան է։ Այդ մամուլը, որ մի ժամանակ այնպիսի ինքնավստահութեամբ բացականչում էր, թէ հասարակական-քաղաքական լրագիրը կրօն չունի, այժմ ամբողջովին եկեղեցական փարաջայ է հագել և դաշիից դուրս է գալիս ապացուցանելու համար .. թէ ինչ, ինքն էլ չգիտէ։ Ամենքն էլ ինչ որ բարբաւում են, առանց գիտենալու թէ խնդիրը ինչումն է։ Կիսակիրթ տղաներ, դեռահաս ուսանողներ, թերուս պատանիներ առանց գիտութեան տարրական սկզբունքների, առանց կեանքի ու մարդկանց մասին մի դրական գաղափար ունենալու, գրիչ են վերցնում և լուծում են տալիս համաշխարհային, տիեզերական խնդիրներին, որոնք ի դէպ է ասել՝ մի առանձին նշանակութիւն էլ չունեն հայ ժողովրդի ներկայ և ապագայ կեանքի համար։ Եւ որ հետաքրքիրն է, ոչ ոք չէ հասկանում ոչ իր ասածը և ոչ հակառակորդինը։ Բացառութիւն կազմողները թող ներեն մեզ։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Իզմիրեանց կտակի գործադիր Մնայուն Յանձնաժողովոյ ի Փր. հանդիսի Սահակ Մեսրոպեան մրցանակաբաշխութեան, ի 25 յունիս, 98։

(Վերջ)

Յանձնաժողովս վերոգրեալ եօթն երկասիրութիւնները նախապէս և ըստ օրինի նախաքննութեան ենթարկեց, և հետաքննին խուզարկութեամբ եզրակացուց թէ,

Առաջինը՝ Խաչատուր Յովհաննէսեանցի «Բեւեռագիր արձանագրութիւններ»ն օտար լեզէ պարզ թարգմանութիւն մ'է.

Երկրորդն՝ Ե. Լալայեանցի «Վարանդան» հեղինակի մը ամբողջ աշխատութիւնը չէ, այլ հաւաքածոյ հրատարակութիւն մը, և

Երրորդն՝ Ե. Ղահազիզի «Միխայել Նալբանդեանցն» և

Չորրորդը՝ Ն. Տ. Կարապետեանի «Խաչատուր Աբովեանն», ուղղակի Ազգ. Գրականութեան նպաստող գործեր չեն, այլ մասնակի կենսագրութիւններ, որոց վրայ այլ և այլ անձանց կողմէ նմանօրինակ հրատարակութիւններ եղած են արդէն։

Հետևաբար կտակին նպատակին անյարմար գտաւ սոյն չորս հրատարակութիւններն և պատշաճ չդատեց մրցման քննութեան ենթարկել զանոնք, ինչ որ ըրաւ միւս երեք երկասիրութեանց համար։

Հինգերորդ՝ Տէր Մովսէսեան Տ. Մեսրոպ վարդապետի «Սոկրատայ Սոզոմենոսի Եկեղեցական Պատմութիւն»ն յանձնեց Պոլսեվանուց փոխտեսուչ Տ. Ադան Ծ. Վ.-ի Համամեան, որ տարուոյս մարտ 16 թուակիր ընդարձակ տեղեկագրով մը ներկայացուց իր քննադատութիւններն ու դիտողութիւնները։

Հմուտ քննիչն այդ տեղեկագրով մի առ մի յառաջ կբերէ Տէր Մոսէսեան վարդապետի Սոկրատայ եկեղեցական պատմութիւնէն քաղած խնդիրներն և Խորենացւոյ հետ բաղդատութիւններն, և կըգտնէ թէ՝ «Չէ կրցած ըստոյգ և վերջնական եզրակացութիւններ ներկայել, այլ խնդիրներն անլուծանելի թողած է, և կրյաւելու թէ՝ «Արդարև գեղեցիկ ձեռնարկ մ' է ծանօթացնել հասարակութեան մեր նախնեաց գործերն, և անոնց մէկ քանիներու մասին վերջերս յերևան եկած թեր ու դէմ կարծիքներն ուղղել. բայց ամեն բան իրան հաստատուն հիմը պիտի ունենայ, որպէս զի կարենայ մէկն իր շէնքն կառուցանել այդ հիմին վրայ։ Պատմական խնդիրներով զբաղողներու համար կարևոր է այդ։ Այս տեսութեամբ ներում մեզ ըսել թէ Մեսրոպ Վ.ի գրութիւնը պատմական իրերու մասին շատ անզօր է։ Եւ ինչ որ բաղձալի էր անոր մէջ գտնել, այն չենք գտներ։ Սոկրատայ եկեղեցական պատմութիւնն անբաւ նիւթ է մեր մատենագրութեան համար, մանաւանդ փոխրն, որոն մէջ մեր նախնեաց թարգմանութիւններէն շատ մը կտորներ և յաւելուածներ կրտեսնենք։ Մեսրոպ Վրդ. այդ գիրքն իր ամեն մասերովն ուշադրութեան առարկայ ըրած չէ, իր գրածը շատ սեղմ է, կատարեալ ուսումնասիրութիւն չենք կարող համարել զայն»։

Վեցերորդը՝ Տ. Բ. Բգէն Ծ. Վ.ի «Եղիշէն» յանձնեց նախ Մատաթիա Ա. Գարագաշ էֆէնտիի, և սորա իր անձնական տկսրութեան համար հրաժարելէն յետոյ, յանձնեց Թէրզեան Թովմաս էֆ.ի որ Ապրիլ 4 թուակիր քննական տեղեկագրով մը պարզած է իր տեսութիւններն, և կ'եզրակացնէ.

«Ամփոփելով մեր տեսութիւնն այս ընտիր երկասիրութեան վրայ, պիտի ըսենք որ իր նուրբ և խոր հայեցողութեամբ, իր նորանոր լուրջ խուզարկութեամբ, իր ընդարձակ տեսութեամբ և զգօն խորհրդածութիւններով, ազգային աւանդութեանց և ի մասնաւորի սխրալոյն Եղիշէի ամեն հետամուտ անձանց ընթերցման արժանի է. և փափաքել կուտայ որ այս օրինակ այլևս գրութեամբ արգոյ հեղինակը ճոխացնէ մեր մատենագրութեան քննադատական ճիւղը։ Ուրեմն ուրեք ուրեք ամեն ընթերցողը համակարծիք չըգտնուին իրան—և այս իսկ է ընդհանրապէս քննադատութեանց ճակատագիրը,—բայց ոչ ոք պիտի ուրանայ որ երիտասարդ հեղինակն ունէ յողնութենէ—որչափ տաժանելի ալ ենթադրուի—խոյս տուած չէ իր գործն ամբողջացնելու համար։

Ուստի ի նկատի առնելով այն հրամայելից շարակարգութիւնն, հայեցողութեանց սրութիւնն ու խորութիւնը, տեսութեանց նորութիւնը, զգուշաւոր խուզարկութիւնները, կորովալի քննադատութիւններն որովք յոյժ օգտակար և հետաքրքրաշարժ կըհանդիսանայ այս գործն, ըստ իմ խոնարհ կարծեաց զայն արժանի կըհրատարակեմ առաջադրեալ մրցանակին»։

Եօթներորդն՝ Տ. Մուշեղ Ծ. Վ.ի «Գրիգոր Նարեկացի»ն յանձնեց Աշրեան Տ. Խորէն Սրբազանի, որ Ապրիլ 7 թուականաւ յղած է իր քննական տեղեկագիրը։

Ն. Սրբազնութիւն այս տեղեկագրով ի վեր կըհանէ գործին գերակշիռ առաւելութիւնն ամեն տեսակէտով, և կըգովէ երիտասարդ վարդապետին զգայուն և յուզեալ շեշտերով և լի հմտութեամբ այս աշխատասիրութիւնն, արդիւնք անոր հոգեսիրական և մաքուր կրթութեան, բայց երկասիրութեան բոլոր առաւելութիւնները ցուցնելէն յետոյ, եզրակացութիւնն և դատաստանը զանց կընէ և կըթողու Յանձնաժողովոյս։

Արդ Գործադիր Յանձնաժողովս կատարած սոյն քննութեանց տեղեկագրերն մի առ մի նկատողութեան առնելէ յետոյ, ինքն ևս վերջնական քննութիւն մը կատարեց իւր անդամակցաց ձեռօք, և ըստ ամենայնի արժանի դատեց Սահակ—Մեսրոպեան Մրցանակին Եղիշէ և Գրիգոր Նարեկացի ստեար և բազմաշխատ և արդիւնաւոր գործերն։ Եւ թէպէտ մրցանակի սահմանեալ պարգևն ըստ կտակի տարեկան շուրջ 60 ոսկի է, սակայն յանձնաժողովը ի նկատի առնելով վերոյիշեալ երկու գործոց կարևորութիւնն ու անհամեմատ առաւելութիւնն, և նախընթաց տարիներէ տրամադրելի մնացած գումարներու մասերը, պատ-

շաճ համարեց իւրաքանչիւրին 40 ոսկի պարգև սահմանել, ի քաջալեր և ի տրիտուր ջանից մեղւաջան աշխատասիրողաց։

Ահաւասիկ, Տեարք, ասոնք են ներկայ տարեշրջանի Սահակ—Մեսրոպեան Մրցանակաբաշխութեան արդիւնքն, և լիայոյս ենք որ յետ այսու նորանոր արդիւնաւոր աշխատութեամբք առաւել ևս պիտի փայլի Ազգային Դպրութեան տաճարն, և Հեղինակք պիտի արժանանան Բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի Մրցանակին, և շնորհաց Սրբոց Թարգմանչացն Սահակայ Հայրապետի և Մեսրոպայ Վարդապետի, մեր երջանկայիշատակ Հարց, զորս կը-տանէ այսօր Հայ. Ս. Եկեղեցին։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԾԻՔ

—

Կովկասեան դպրոցական շրջանի հոգաբարձուն տեղեկութիւն է ստացել թէ բարձրագոյն հրամանով նախարարների կոմիտեին ամենահպատակօրէն ներկայացրած հաշուետուութեանց վրայ նշանակուած են հետևեալ բարձրագոյն նկատողութիւնները Քութայիսի և Երևանի նահանգներին վերաբերեալ 1896 թ-ի համար. Քութայիսի զինուորական նահանգապետի հաշուի մէջ, թէ ժողովրդական լուսաւորութիւնը Քութայիսի նահանգում նկատելի կերպով տարածւում է և նրա հետ միասին տարածւում են ազգաբնակութեան մէջ և ռուսական քաղաքացիութեան լուսաւոր սկզբունքները՝ Մխիթարական է։ Իսկ Երևանի նահանգապետի հաշուի մէջ, 1) թէ նահանգի իգական ազգաբնակութեան մէջ լուսաւորութիւնը տարածւած է շատ աւելի թոյլ կերպով, քան թէ արականի մէջ, Նորին Մեծութեան հաճելի է եղել իր ձեռքով ստորագրել, և 2) այն ցուցման դիմաց թէ շատ ցանկալի է բաւականացնել մի քանի քրդական հանձնաքների խնդիրը նրանց համար դպրոց բանալու մասին նշանակած է «Անկասկած»։ Յետոյ Թիֆլիսի նահանգապետի ամենահպատակօրէն հաշուետուութեան մէջ, 1) այն զեկուցման կից, թէ ազգաբնակութիւնը սիրով է վերաբերւում դէպի այն դպրոցը, որ տալիս է երեխաներին տնտեսական և արհեստագիտական կրթութիւն և վստահութիւնը դէպի այդպիսի դպրոցը աճում է՝ հասկանալի է և 2) այն զեկուցման մօտ, թէ ժողովրդի մէջ ոստայնանկութիւնը, ձեռագործը և մանումը բարձրացնելու և զարգացնելու համար ենթադրում է կազմակերպել մի քանի դպրոցներին կից, Գորիի և Թելաւի գաւառներում՝ նշանակուած է «նոյնպէս օգտակար է», ըստ որում «մի քանի իգական դպրոցներ... և ոստայնանկական բաժիններ» խօսքերը Նորին Մեծութեան հաճելի է եղել իր ձեռքով ընդդծել։

Նախապատրաստութիւններ Մոսկւայում Ալէքսանդր II-ի արձանի հանդիսաւոր բացման համար

—

Մոսկւան առանձին արագութեամբ սկսել է պատրաստել առաջիկայ հանդիսաւոր օրերի համար. Մոսկւայի արհեստանոցները աշխատանքով ծանրաբեռնուած են։ Զգացւում է պակասութիւն հրաւառութեան հարկաւոր լապտերների և այլ պարագաների մէջ։ Հրաւառութեան վերաբերող շատ պատուէրներ չեն կարող կատարել։

—Սկսել են Մոսկւա հասնել արտասահմանեան լրագրների և ամսագրերի թղթակիցներ և զանազան գեղարուեստագէտներ հանդէսներին մասնակցելու համար։

—Օգոստոսի 7-ից կրսկսեն գալ գօրքերը Պետերբուրգից Մոսկւա։

—Ի նկատի ունենալով, որ բազմաթիւ բարձրաստիճան անձինք են հրաւիրուած, այն աստիճանաւորը, որ կառավարում է Մոսկւայի պալատական վարչութեան կից եղած ախոռային մասը, ներկայումս արդէն վարձել է 4000 գոյգ ձիաներ։

—Պալատի կողմից հրաւիրուած անձնաւորութեանց համար, Մոսկւայի պալատական վարչութիւնը վարձել է 100 №-ներ «Սլաւոնական տուկայ» կոչուած հիւրանոցում։

—Կայսր Ալէքսանդր II-ի արձանը բացելու օրից սկսեալ Մոսկւայի Կրեմլում կընշանակուէ պալատական գրենադերների մշտական օրապահութիւն, որպիսին գոյութիւն ունի Պետերբուրգում Կայսր Նիկոլայ I-ի արձանի մօտ։

ԿԱԼԷՅԴՈՍԿՈՊ

—

Օգոստոսի աղէտները։ Երկրաշարժ։ Կարկուտ։ Մորեխ։ Հեղեղ։ Հրդեհ։ Խորտակումն։ Մարդկային զոհեր։

—

Տրոպիկական յուլիսեան շոգերին չաչորդեց շատ զով, կատարեալ աշնանային եղանակով օգոստոսը, որ սակայն հէնց առաջին օրից հետը բերաւ մեր երկրի համար զանազան տեսակ աղէտներ։

Երկրաշարժի ուժգին երկու հարուածներ, օգոստոսի մէկին, առաւօտեան երեք ժամին ցնցեցին մեր երկրի բոլոր կողմերը։ Մի քանի տեղ փուլ են եկել շինութիւններ, տների պատերում բացուել են ճեղքուածներ։

Օգոստոսի 3-ին, երեկոյեան կարկուտը ոչնչացրել է Գանձակում խաղողի այգիները. վնասը կէս միլիոնի է հասնում։ Հախն է ծոյլ գանձակեցիներին, ինչու չեն ապահովացնում այդ տեսակ աղէտներից իրանց հանդը, անդաստանը, այգի ու բանջարանոցը։

Դաղստանում ահագին քանակութեամբ մորեխ է երևացել։ Դերբենդից դէպի Կրասնաւոդսկ անցնելիս նրանք այնքան ստուար բանակով են եղել թռչելիս, որ արևի առաջը կըտրել են և մի քանի վերստ երկիրը խաւարացրել։ Այդ մորեխները եթէ այս տարի ղգալի վնաս էլ չըհասցնեն մեր գիւղացիներին, այնուամենայնիւ գալ տարւայ վնասը ակներև է, եթէ չըփչացնեն նրանց ածած ձուաները։

Ղզլարում Տալովկա կոչուած մասում գետը պատռել է պատնէշը, ջուրը թափւում է քաղաքը հեղեղելով այգիները։

Բագւում Վիշաուի նաւթահորերն են այրել, աղէտին զոհ տալով մի քանի բանւոր մշակներ և ահագին հարստութիւն՝ նաւթի պահեստներ կրակին ճարակ արել։ Այդ ընկերութեան կառավարիչը Լոնդոն հաղորդելով իրանց վարչութեան այդ պատահարի մասին, հեռագրով ստացել է լիազօրութիւն այդ ընկերութեան անունից յայտնելով զոհերի ընտանիքներին մխիթարանք, հոգեպէս նրանց վշտին մասնակցութիւն և բացի այդ նիւթապէս նրանց բոլորովին երաշխաւորելու առհաւատչեաներ։

Նիժնի-Նովգորոդումն էլ հրդեհը լափել է աստուածահաճոյ մի հիմնարկութիւն։ Ռուկաւիշնիկովի աշխատասիրութեան բանւորների տունը բոլորովին այրել է, մոխիր դարձրել այնտեղ ապաստարան գտած անզօր ծերուկներին։

Թիֆլիսում պոստ-հեռագրատան շինութեան վրայ բանող հայաստանցի և պարսկաստանցի եօթ մշակներ աղիւս բարձրացնելիս, ոտների տակի ժամանակաւոր պատուանդանի դերանները փտած լինելով՝ կոտրւում են և թշուառ բանւորներին, մահամերձ վիրաւորում։

Դպրոցական

Թիֆլիսի Յովնանեան դպրոցի շինութիւնը, գոյքը, դրամական կարողութիւնը և նրան պատկանող քարտանսարան յանձնուեց այս օրերս ժողովրդական դպրոցների տեսչին։

—Կիևի բազմարուեստեան դպրոցի բացումը վճռուած և ծանուցուած է։ Պրոֆէսորների պատրաստութեան համար, երեք տարուայ ժամանակամիջոցում, նշանակուած է 72,000 ռուբլի, ուսանողներին կենսաթոշակ տալու համար՝ 15,000 ռուբլի իւրաքանչիւր տարի։ Պրոֆէսորներին նշանակում է ելևմտի նախարարը։ Դպրոցն ունենալու է 23 իսկական պրոֆէսորներ և 12 արտաքոյ կարգի պրոֆէսորներ։

—Դպրոցական վարչութիւնը հարց է ծագեցրել՝ հիմնելու բոլոր ժողովրդական դպրոցների տեսչութիւններին կից ուսուցիչներին օգնող ընկերութիւններ։

ԼՈՒՐԵՐ

Այսօր Կոչորից կըվերադառնայ Թիֆլիս Կովկասի Իշխ. Կառավարչապետը և այսօր էլ կ'ուղևորուի Մոսկուա Ալէքսանդր II-ի արձանի բացման հանդիսին ներկայ գտնելու։

Ձուշուց մեզ գրում են. «Այստեղ պաշտօնապէս հեռագիր ստացուեց, որ Վեհափառ Կաթուղիկոսը Տաթևից մի քանի օրից յետոյ կըբարեհաճէ շնորհ բերել Ձուշի։ Այս առիթով գաւառապետը յայտարարել է, որ Վեհափառի ժամանելու ժամանակ քաղաքը զարդարեն դրօշակներով, զորգերով, երեկոները լինի հրաւառութիւն և այլն»։

Տարազի հետևեալ №-ը՝ Ս. Աստուածածնայ կիրակէին, լոյս չի տեսնիլ, թէ այդ տօնի պատճառով և թէ նրա նախընթաց օրը՝ շաբաթ, Ս. Էջմիածնայ տօնի առիթով, որ տպարանը փակ կըլինի։

Թերթիս խմբագիր Տ. Նագարեան այսօր մեկնում է Մոսկուա, ուր ներկայ կըլինի Ալէքսանդր II Կայսր արձանի հանդիսաւոր բացման և ապա Պետերբուրգի վրայով կ'ուղևորուի երկու ամսով արտասահման։ Պ. Ա. Արասխանեանց կըխմբագրէ Տարազ-Աղբիւր մեր խմբագրի բացակայութեան ժամանակ։

Յայտնի է, որ ներկայ պատերազմում ամերիկացիները գործ էին ածում դինամիտի թնդանօթներ, որոնք փայլուն յաջողութիւն ցոյց տուին։ Այժմ մտադրութիւն կայ ռուսական նաւատորմիղի մի քանի նաւերի վրայ այդպիսի թնդանօթներ գործադրել։

Թիֆլիսում, մետաքսագործական կայարանին կից բացում է մեղուապահութեան ցուցահանդէս, օգոստոսի 15-ից սկսեալ։ Ցուցահանդէսին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները, կարելի է ցոյց դնել մեղուապահութեան վերաբերեալ բոլոր առարկաները՝ փեթակներ հանդերձ մեղուներով և առանց մեղուների, մեղուապահական իրեր. մեղր, մոմ, մեղրաբոյսերի սերմեր և օրինակներ, մեղրից և մոմից շինուածքներ, քաղցրաւենիք, խմիչքներ, մուրաբա, դեղեր, նկարներ և այլն։ Տեղերը տրւում են ձրիաբար։ Մանրամասնութեանց մասին դիմել ցուցահանդիսի կառավարիչ Կ. Մ. Զանիսին։

Պիրոգովի անունով կազմուած համառուսական ժողովի վարչութեան կից հիմնւում է առանձին յանձնաժողով՝ որ պիտի քննէ այն հարցը, թէ արդեօք հնարաւոր է հիմնարկել Ռուսիայում ժողովրդական առողջութեան նախարարութիւն։

Վճռուած է բոլոր գիւղատնտեսական դպրոցներին կից հիմնել գիւղատնտեսական գրասենեակներ, որոնց պարտաւորութիւնը կըլինի ցանկացողներին հասցնել բարեկարգուած գործիքներ, մեքենաներ և սերմեր։

Մեր երկրի հանքային ջրերի այցելութիւնը տարէցտարի աւելանում է։ Օրինակ Ժելեզնովոդսկում անցեալ տարի այս ժամանակ եղել են 1600 այցելուներ, իսկ այս տարի 1800-ից աւելի է։ Ուստի բնակարանների սաստիկ պակասութիւն է զգացւում։

Ներքին գործերի նախարարութիւնը կազմել է մի ծրագիր՝ գործարանական բանւորների կեանքը, առողջութիւնը և բարոյականութիւնը պահպանելու մասին։ Ծրագրի կանոնները պարտաւորացուցիչ են գործարանների համար։ Ծրագիրը դեռ ենթարկւելու է պետական խորհրդի քննութեան։

Անգլիական նաւակառույցներում ներկայումս պատրաստւում են մի շարք շոգենաւեր ռուսական ընկերութիւնների կամ մասնաւոր առևտրականների համար։ Այդ բացատրւում է նրանով որ նոր է թոյլատրած առանց մաքսի նաւեր բերել Ռուսիա։ Կառուցողնաւերի մեծ մասը նշանակուած է Կասպից և Սև ծովերի համար։

Նորերս Պարիզում կայացած կաթոլիկ եպիսկոպոսների համաժողովում հայ-կաթոլիկ եպիսկոպոս Թերզեան ժողովի ուշադրութիւնը դարձրել է հայկական կոտորածների և առ հասարակ հայերի դրութեան վրայ։ Բայց ինչ է պահանջում ճառախօսը և ինչ դիտաւորութեամբ են հարցով հետաքրքրւում նրա ունկնդիրները, սա է գլխաւոր խնդիրը ..

Սարատովի միսիոնարական ընկերութեան կողմից ուղարկուած է աստուածաբանութեան դոկտոր Բոհբախ՝ հայ ժողովրդի դրութեան մասին տեղեկութիւն հաւաքելու համար։ Միսիոնարը այժմ Էջմիածնումն է, որտեղից պիտի գնայ դէպի Վան, Մուշ և այլ տեղեր։ Ցանկալի էր որ օտարերկրացի միսիոնարները նայէին իրանց ուսումնասիրութեան առարկայի վրայ միայն ճշմարտութեան տեսակէտից, որոնք շատ ու շատ անգամ ոչ մի կապ չունեն նեղ միսիոնարական տեսակէտների հետ։

Դանձակից մեզ հաղորդում են, որ դիտաւորութիւն կայ հրատարակելու «Елисавет. Губ. Вѣд.» անունով մի պարբերական թերթ, նոյն նահանգի ստատիստիկական բաժնի պաշտօնեայ պ. Սեգալի խմբագրութեամբ։ Հրատարակութիւն նահանգական վարչութեան Բացի այդ, պ. նահանգապետը կամենում է բանալ և տպարան ու այդ մասին գրագրութիւն է բացուած Բագուայ պ. նահանգապետի հետ ու տեղեկութիւններ են հարցրել թէ ինչ միջոցներով է բացել նահանգական տպարանը և ինչ գումարներով է հրատարակում «Бак. Губ. Вѣд.»։ Որքան մենք գիտենք, Բագուայ տպարանը բացել է հանգանակութեամբ։

Պետերբուրգի փողոցներում յայտնել են Կովկասցի մանրավաճառներ, որոնք ծախում են արծաթեայ ապարանջան-

ներ, լուցկամաններ և այլ մանր առարկաներ Կովկասի վարպետների ձեռքից դուրս եկած։ Առհասարակ կարելի է ասել, որ մեր երկրի ոսկերչությունը դեռ երկար ժամանակ, գուցէ և միշտ, կկարողանայ մրցել եւրոպական գործարանների հետ։ Այստեղ ներգործում են մի շարք տեխնիկական և տնտեսական պատճառները, որոնց արժէ ուսումնասիրել։

Բաւական վաճառականների մէջ միտք է ծագել՝ հիմնել բաւական վաճառականական վարչութիւն (Купеческая управа)։

Խառն լուրեր

Կ. Պոլսում ուշադրութիւն են դարձրել այն հանգամանքի վրայ, որ բուլգարների և սերբերի մէջ պատահող ընդհարումների մէջ համարեա միշտ աչքի ընկնող դեր են խաղում երկու ազգութիւնների պատկանող ուսուցիչները։ Ուստի մեծ վեզիրը հրամայել է Մակեդոնիայի վալիներին աչուքները գործել մեծ լրջութեամբ և պաշտօնից զրկել հրապարակագործ ուսուցիչներին, իսկ հարկաւոր դէպքում աքսորել։ Այդ կարգադրութեան հիման վրայ արդէն աքսորուած են վեց ուսուցիչներ Փոքր-Ասիա։ Թուրքաց կառավարութեան համար շատ լաւ պարուակ է՝ մաքրել Մակեդոնիան բուլգար և սերբ ուսուցիչներից։

—Times լրագրի ասելով, Թէհրանում ընդհարում է տեղի ունեցել անգլիական և ռուսական ազդեցութիւնների մէջ։ Պարսկական կառավարութիւնը կամեցել է անգլիական գումարատէրերից փոխառութիւն անել, որի ապահովութեան համար առաջարկել է հարաւային Պարսկաստանի մաքսային եկամուտները։ Իսկ ռուսաց կառավարութիւնը մէջ է խառնուել և աւելի նպաստաւոր առաջարկութիւն է արել իր կողմից։ Ապա պարսկական կառավարութիւնը վճռել է հրաժարուել մտադրուած փոխառութիւնից, և չըպայմանաւորուել ոչ անգլիացիների, ոչ էլ ռուսների հետ։

—Այն լուրը թէ Ամերիկան հրաժարւում է Ֆիլիպպինեան կղզիներից, զարհուրանք է առաջացրել ապստամբների պարագլուխների մէջ։ Ագուինալդոն դիմեց անգլիական հիւպատոսին այդ առիթով։ Հիւպատոսը հաւատացրեց, որ նրանք կարող են վստահ լինել Ամերիկայի պատի և արդարամտութեան զգացման վրայ։ Ամերիկան բոլոր բանակցութիւնների մէջ հարցնելու է նրա համաձայնութիւնը։ Նախ հարկաւոր է թօթափել սպանական լուծը և Ագուինալդոն պիտի չըխանգարէ այդ բանը։

—Ներկայումս Սոֆիայում տեղի է ունենում մակեդոնական համաժողովը, որի առիթով «Pol. Cor.»-ի թղթակիցն ասում է, թէ մակեդոնացիք լաւ են հասկանում, որ այժմ շատ քիչ յոյս կայ լայն ինքնավարութիւն ձեռք բերելու, որպիսին պահանջում են իրանց ծրագրով։ Իսկ այժմ մակեդոնացիք պատրաստ են բաւականանալու այնպիսի բարեփոխութիւններով, որոնք որոշ չափով կ'ազատէին քրիստոնէական ազգաբնակութիւնը տաճկական լծից։ Սրան կասեն բարակ մանել...

—Թուս. գործ. հեռագրում է, որ Ռուսիան ի պատասխան Դրան վերջին շրջաբերական ծանուցագրի, վճռական կերպով ընդդիմութիւն է յայտնել Կրետէի թրքական զօրքերի նորերը ուղարկելուն։ Սպասում են, որ միւս գործակից երեք պետութիւններն էլ նոյնանման յայտնարարութիւն կըտան։

—Ամերիկական մամուլը սկսել է խիստ հետաքրքրուել ռուս-անգլիական անհամաձայնութեամբ Չինաստանին վերաբերեալ։ «Վաղուց ժամանակ է—ասում է «Sun» լրագիրը,—որ աշխարհը իմանայ, թէ Անգլիայի հետ միասին Ամերիկան էլ շահագրգռուած է Չինաստանի ազատ շուկաների հարցով և որ նրա շահերը վրտանգի են ենթարկուած ոչ միայն Չինաստանի այն մասերում, որ գրաւել են Ռուսիան, Ֆրանսիան և Գերմանեան, այլ և Յանցի-Կեանգի հովտում։ Ամերիկան մի քանի լրագիրների կարծիքով, յիշեալ վտանգը ի նկատի ունենալով, պիտի իւրացնէ Ֆիլիպպինեան կղզիները։

Մեր պատկերները

ԳԱԶԱՆԱՆՈՅՈՒՄ

Արաբուհին ոչ թէ ձեռքի ձողով, այլ իր հմայող սևաբակ աչքերով սանձահարել է կատաղի գազանին, որին այդ օրը պահապանը մոռացել է ժամանակին նրա լուծը հագցնելու։ Նրա մանչիկները լսելով սանձահարողը եկել է վայրենիներին ուսուցանելու համբերութիւն։

ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

Ի՞նչ սքանչելի նիւթ. նկարիչը կեանքի արշալոյս՝ մատաղ սերունդը՝ երկու աղջիկ բերել է աղբիւրի մօտ։ Վրխտում է զուարթ կարկաչներով երեք կեանք, բայց դէպի ո՞ւր։ Արդեօք գեղանի կոյսը ընկերոջ հետ կարողանալու է, տանել զովարար ջուրը յագեցնելու նրա ծարաւը, որ կեանքի ալիքներից թէև ուժաս

ԲԱՑԻԱԾ Է ՏԱՐԱԶԻ ԿԻՍԱՄԵԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս է տեսնում ՏԱՐԱԶԸ շաբաթական ԵՐԵՔ թերթ։

ՏԱՐԱԶԻ 6 ամսեայ բաժանորդագինը (յուլիսից-յունուար 99 թ.) ճանապարհածախսով 3 ր.

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

ԱԹԱՌԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

Ս. ռաւօցները

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. *վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) եւ միզասեռ. հ.*

Կ. Մ. Զիկովանի—9—10 ժ. *աչքի, ականջի եւ արդայինի հ.*

Կին-բժիշկ Ա. Ի. Բուդենկո—10—11½ ժ.: *կանանց եւ երեխ. հ. ծաղկի պատուաստումն:*

Զ. Ի. Բաբանասեանց—11½—12 ժ. *կ. հ.:*

Ի. Ֆ. Պոռասեւիչ—12—1 ժ. *ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի հ.*

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. *ներքին եւ երեխայոց հ.*

Ա. Գ. Գուրկո—1½—2½ ժ. *ներքին եւ միզասեռական հ.*

Ծրեկօները

Ա. Մ. Փուղինեան—6 ժ. *ներքին եւ երեխայոց հ.*

Բ. Ա. Նաւասարդեան—6½—7 ժ.

Ա. Ն. Ղպակովսկի—6—7 ժ. *ներդայինի (եղեկտրաբուժութիւն), վեներ. եւ մորքի հ.*

Տ. Ի. Բուդենկո *հիւանդանոցում իմիական եւ խոշորացուցական հետազօտութիւններ է անում մկան, խիխ, արեան, կաթի եւ այլն:*

Վճար 50, կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) եւ օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքների երթևեկութիւն

Կայարաններ	Դուրս է գնում			
	Բագուից-Բաթում		Բաթումից Բագու	
			Բագու հաս.	
Բագու	4.05	12 20	12.59	9.5.45
Սալախ	12.15	9.24	4.58	7.56
Գանձակ	2.37	11.54	2.55	5.45
Աղստաֆա	5.32	3.18	11.51	2.00
ԹԻՖԼԻՍ	9.10	7.48	9.05	10.58
Գորի	11.32	10,33	6.18	6.57
Միխայլովո	12.56	12.02	5.00	5.41
	Բաթում է հասնում			
Բաթում	8.47	8.38	8.20	8.35

Գանձակ. Սեւ թանձրանները գիշեր են։

Թիֆլիս հասնում են գնացքները՝ Բաթումից 8 ժ. 22 ր. երեկ. և 9 ժ. 07 ր. առ., Բագուից՝ 8 ժ. 26 ր. առ. և 6 ժ. 33ր. երեկ. Թիֆլիսից գնացքը դուրս է գալիս՝ Բաթում 9 ժ. 10 ր. առ. և 7 ժ. 48. եր. Բագու 9 ժ. 05 երեկ. և 10 ժ. 57 ցերեկ.։

Լոյս տեսաւ

ԼՈՒՅՍԱՅ

Գրական հանդիսի 1898 թ. բ. գիրքը եւ ուղարկեց բոլոր բաժանորդներին։ Բացուած է (1899 թ. չորրորդ տարի) բաժանորդագրութիւնը. 2 գրքի գինն է 3 ռուբլի։

Հրատարակիչ՝ **Գիւս ա. Բան. Աղամեանց**

Պայմաններ բաժանորդագրութեան

I

Տարագի 6 ամսեայ բաժանորդագինը յուլիսից մինչև յունուար 99 թ. 3 ր.

II

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը յունուար 98-ից մինչև 99 յուն. 3 ր.

III

Տարազ մարտից մինչև յունուար 99 թ.
Աղբիւր յունուարից » » »
Ալբոմ-Ալմանախ
Հայրենասէր Իֆիգենիա պրեմ. } 9 ր.

Վեհափառ Հայրիկի եւ Ամենապատիւ Սրբազան Իզմիրլեանի նեռապակու վրայ պատկերները վաճառուում են հատը 10 ր.։

ԳԻՐՔԻՆ ՍՊԻՏԱԿԻՆ նեռապակու վրայ պատկերը 3 ր. հանապարհածախսով 4 ր. Վաճառում է Յովհ. Տեր-Սարգսեանի թղթավաճառանոցում։

Լոյս տեսաւ

Անտրպետի

ՔՈՌ—ԵՂԻԿ

վէպը

(Զիրակեցիների կեանքից)։

Շարունակւում է տարեկան բաժանորդագրութիւնը

Պատկերազարդ ամսագրի **ԱՊԱՌԷՆ**

Նոր բաժանորդները կընդունուի բոլոր լոյս տեսած №№-ը—յունուարից

Տարեկան գինը 3 ր. (արտասահման 12 ֆր.) Ալբոմ-Ալմանախի (101 ժամանակակից և հետաքրքրական պատկերներ) հետ 4 ր.։

Հասցէն՝ Тифлисъ, ред. *Агбюръ.*

Լոյս տեսաւ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

1898 № 1.

Գինն է 2 ռ.։

Երկու գրքի բաժանորդագինն է 3 ռ.

Գիմել՝ *Թղթակցութեան համար* Է. Լալայանցի, Герусы (Зангезурскій у.)

Բաժանորդագրութեան համար Амбарцуму Каримянцъ, Тифлисъ, семинарія Нерсисянъ։

ԲԱՐՍԿԻՒ ԽԱՆՈՒԹ

Ոսկի եւ ադամանդի առարկաների.

(*Գոլովինսկի պրոսպեկտ*)

Բացուած է *օպտիկ* ապրանքների բաժանմունք, նոր ամենագեղեցիկ **պէնսնէների** եւ **ակնոցների**, շինուած *ոսկուց* եւ *կրիայի ոսկրից*։ Նոյնպէս պատրաստւում են ակնաբոյժի պատուէրների համաձայն՝ զանազան ակնոցներ եւ փչացածները վերանորոգւում։ Ծախւում են **հեռադիտակներ**։

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻՆ կարելի է բաժանորդ գրել Բագում պ. պ. եղբ. *Թառայեանցների* գրավաճառանոցում, Բալախանի՝ պ. *Աղէքսանդր Արէլեանի* մօտ։ Արհեստաւորներն ու բանւորները կարող են իրանց բաժանորդագինը վճարել մաս-մաս։

Дозв. ценз. Тифлисъ, 8 августа 1898 г. *Տպարան Կ. Մարտիրոսեանցի* Тип. К. И. Мартиросіанца. Орбел., ул. № 1—2.